

Խ. Դյակոնով

ԽԵՔԵՐԸ, ՓՈՅՈՒԳԻԱՑԻՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

1. ՀԱՅԵՐԵՆԻ ՊՐՈԲԼԵՄԸ

Հայերի էթնոգենեզի և հայերենի ծագման հարցը, ինչպես հայտնի է, Անդրկովկասի պատմության ամենաբարդ և վիճելի հարցերից մեկն է։ Այդ հարցին պատասխան տալու համար, անհրաժեշտ է ինչպես պատմական (այդ թվում հնագիտական), այնպես էլ լեզվաբանական՝ հին արևելյան և հատկապես հովիտայան և հնդեվրոպական լայնածավալ նյութերի օգտագործումը։ Իհարկե հոգևածիս հեղինակը հեռու է այդ նյութի բազմադանոթյանը ամբողջապես ձեռնհաս լինելուց, սակայն մենք մեզ թույլ կտանք առաջադրել մի քանի նկատառումներ, հատկապես հին արևելյան բանասիրության և պատմության տեսակետից։

Հարցի բարդությունն այն է, որ հայերենը չըջատատված լինելով հովիտայան կամ, այսպես կոչված, իբերա-հովիտայան լեզուներով և գոյություն ունենալով մի տերիտորիայի վրա, որտեղ առաջ տարածված են եղել խուրրիերենը և ուրարտերենը, որոնք մի շարք գիտնականների կարծիքով նույնպես ազգակից էին հովիտայան լեզուներին, ինքը սակայն պատկանում է հնդեվրոպական լեզուների շարքին։ Այդ իսկ պատճառով դժվար է ենթադրել, որ նա ծագել է հենց այս երկրամասում, անկախ այն հանգամանքից, որ հայ ժողովուրդն այստեղ է կազմավորվել։ Համաշխարհային գիտության մեջ հայերենի հնդեվրոպական բնույթը ընդունված է բոլորի կողմից։ Յուրահատուկ դիրք է զբաղում, սակայն, Գ. Ա. Ղափանցյանը, որը հայերենի բնույթի մասին գրում է հետևյալը. «Հայերենն իր ժողովրդի կազմավորման պրոցեսի կենդանի զավակն է և իր գոյացման հնագույն շրջանում ելնում է, անուարակույս, Խայասայի՝ ցեղերի լեզվից, որը ազգակից է եղել նախախեթերենին և խեթերենին, այդ թվում նաև հիերոգլիֆիկ-խեթերենին, այնուհետև բալայերենին (համաձայն խայասա-բալայական էթնիկ-քաղաքական ճակատագրի) և վերջապես վրացերենին, հատկապես նրա արևմտյան ներկայացուցիչներին՝ մեգրելա-ձանական բարբառներին։ Մենք բացառում ենք իհարկե, փոխառությունները, որոնք կարող էին լինել երկու կողմից էլ։ Գրավոր վկայություններ չհաստատված Խայասայի այս լեզուն... հիմք ձառնելով, ըստ իս, պատմական հայերենին, հետագայում ենթարկվել է ուժեղ փոփոխման՝ խաչաձևման հետևանքով, մի կողմից ինչ որ հնդեվրոպական՝ սլավոնա-սկյութական և հունական տիպի լեզուների, մյուս կողմից՝ Տիգրիսի վերին հոսանքում ընկած Արիմե-Շուպ-րիա երկրի գուցե և Տուրուբերանի խուրրիերեն (շուպրիերեն) լեզվի հետ՝ որով և բացատրում են հայերենի և խուրրի-ուրարտերենի միջև գոյություն

¹ Տես ստորև, էջ 26, ծանոթ. 1։

ունեցող բառապաշարային և ձևաբանական որոշ ազդակցական տարրերը: Հայերենում, որը պատմական ասպարեզ է դուրս եկել միայն 5-րդ դարում մ. թ. ա. բացակայում է ոչ միայն նրա հնդեվրոպական շերտի գերակշռումը՝ որական և քանական տեսակետից, այլև սրա հավասարակշռությունը տեղական ազիանիկ-խուրրիական հիմնական կորիզի հետ...

Այս սահմանումը տառապում է որոշ անպարզություն: Մի կողմից չեղինակը կարծես թե հայերենի «հիմնական կորիզը» համարում է խուրրիական շերտը, մյուս կողմից կարծում է, որ «պատմական հայերենի հիմքում» ընկած է եղել առանձին լեզու՝ խայասա երկրի ցեղերի լեզուն, իսկ խուրրի-ուրարտական տարրերը հնդեվրոպական տարրերի հետ մեկտեղ հանդիսանում են սոսկ հետագա ուժեղ կուտակման արդյունք: Նույնպես անորոշ է նաև խայասա երկրի ենթադրական լեզվի սահմանումը: Ակներև է, որ այդ լեզուն չէր կարող միաժամանակ ազդակից լինել «նախախեթերենին և խեթերենին, այս թվում նաև «հիերոգլիֆիկ խեթերենին», այնուհետև բալայերենին... և վերջապես՝ վրացերենին», քանի որ հայտնի է, նախախեթերենը և վրացերենը պատկանում են կովկասյան (կամ իրերակովկասյան) լեզվախմբին, իսկ խեթերենը (նեսիերեն) ինչպես «նրանից ուժեղ չափով տարբերվող «հիերոգլիֆիկ խեթերենը» ե, ըստ երևույթին, նրան շատ ավելի մոտ բալայերենը բոլորովին տարբեր, հնդեվրոպական լեզվախմբի լեզուներ են: Նախախեթերենը լոկ սուբստրատ է հանդիսացել նեսիական-խեթերենի և հնարավոր է, նաև Փոքր Ասիայի մյուս հին հնդեվրոպական (հին-անատոլյան) լեզուների համար:

Դ. Ա. Ղափանցյանի «Խայասան՝ հայերի բնօրրան» հետազոտության մեջ բերված խայասայի օնոմաստիկայի և տեղանունների ամբողջ նյութը վկայում է Խայասայի լեզվի (որը հավանաբար մոտ է եղել խուրրիական լեզվին) ոչ հնդեվրոպական բնույթի մասին:

Խայասայի և հարևան շրջաններից ծագող 9 անձնանուններից և 6 տեղանուններից, որոնք քննարկվում են Դ. Ա. Ղափանցյանի կողմից հիշյալ աշխատության մեջ (էջ 39—78), ութին Դ. Ղափանցյանը տալիս է խուրրիական ստուգաբանություն (Kumma¹-, Dukkama-, Hukkana-խեթական ստուգաբանական տարբերակներով, Annia, Maria(?), Mutti-կասկածելի, Ari¹bizzi, Aissia), մեկին՝ հայկական (Vannis՝ հայ. van «վանք, մենաստան» այս ստուգաբանությունը մեզ խիստ անհամոզեցուցիչ է թվում), մնացած վեցը մնում են կասկածի տակ: Խայասայի աստվածների 12 անուններից (էջ 89—98) և ոչ մեկը, համաձայն Դ. Ղափանցյանի տվյալների, կապ չունի հայերենի հետ, եթե չհաշվենք զաղափարագրերով ծածկած դիցանունները՝ ¹U.GUR, ստորերկրյա աստվածության, որի անունը Դ. Ա. Ղափանցյանը կամայականորեն կարգում է Ag, և ¹ISTAR աստվածուհու, որի անունը նա նույնպես կամայաբար կարգում է iepit (Խերաթ), թեև խուրրիական այս հայտնի աստվածուհու անունը երբեք չի արտահայտվում ¹ISTAR զաղափարագրի միջոցով (խուրրիների մոտ ¹ISTAR-ը դա Շավուշկա աստվածուհին է) և Խերաթը երբեք չի եղել ստորերկրյա աստվածության ամուսինը:

Չի կարելի ընդունել սակայն, որ հայերենը իր հիմքում ոչ հնդեվրոպական լեզու է, ինչպես ըստ երևույթին կարծում է Դ. Ա. Ղափանցյանը:

¹ Г. А. Капанцян. Хайаса—колыбель армян, Ереван, 1947, էջ 247:

Պարսկերը այստեղ այս կամ այն էլեմենտների թվական գերակշռությունը չէ, այլ այն, որ հայերենի համեմատաբար սակավաթիվ (եթե անտես անենք ուշ իրանական և առաջին հերթին պարթևական փոխառությունները) հնդ-նվրոպական տարրերը ամբողջապես պատկանում են բառային հիմնական ֆոնդին, այս թվում ազգակցության տերմինները, թվականները, դերանունների զգալի մասը և որոշ անուններ ու բայեր, որոնք արտահայտում են ամենակարևոր և հնագույն հասկացությունները¹։ Նույնը կարելի է ասել նաև քերականական կարևորագույն տարրերի մասին։ Կասկածից դուրս է ուրեմն, որ հայերենը պատկանում է հնդեվրոպական լեզվախմբին, ինչպես և կարծում է գիտնականների ճշող մեծամասնությունը²։

Որպեսզի այս դրույթը կարողանա օգնել հայկական էթնոգենեզի ուսումնասիրմանը, անհրաժեշտ է որոշել, թե հնդեվրոպական լեզուների որ ճյուղին է պատկանում հայերենը։ Եթե չհամարենք, որ հայերենն ընդհանրապես զերտ կապ չունի ուրիշ հնդեվրոպական և ոչ մի լեզվի հետ, ապա կարող է խոսք լինել նրա՝ երկու ճյուղերից մեկին պատկանելու մասին՝ ա) հին-անատոլյանին, բ) թրակա-փոյուզիականին³։

¹ Օր. հայ. «հայր», «մայր», «եղբայր», «քույր», «գուտը», «հաւ», «ներ», «տալ», «ապր», «սկսուր», «կով», «հորթ», «ղառն», «այծ», «մուկն», «հաւ», «ձուկն», «իծ», «մեղր», «գարի», «աղ», «միս», «սիրտ», «ոտն», «մի», «երկու», «երեք», «չորք», «հինգ» և այլն. «եռ», «դու», «մեք», «այս», «սա», «երբ», «հարց», «ազ» և այլն և այլն։

² Այս տեսակետի նորագույն փաստարկումը տես A. A. Асмангулян, Против гипотезы о двуприродности армянского языка, «Вопросы языкознания», 1953, № 6. էջ 21 հետ։

³ Ոչ հունական ոչ էլ սլավոնական ճյուղերը հաշվի չեն կարող առնվել։ Հունարենի և հայերենի նմանության առանձին մոմենտները պետք է վերագրվեն հունական և թրակա-փոյուզական ճյուղերի միջև եղած մոտիկությանը։

Հայերենի հնդիրանական լեզուների հետ հնարավոր ազգակցության հարցը մանրամասն քննարկման է ենթարկվել դեռևս 19-րդ դարում և լուծվել վերջնականապես բալթական իմաստով (H. Hübschmann, Über die Stellung des Armenischen im Kreise der indog. Sprachen, Kuhn's Zeitschrift für vergl. Sprachwissenschaft, XXIII (1887), էջ 3 հետ)։

Իրանական (հիմնականում պարթևական) առատ բառապաշարը հայերենում փոխառությունների արդյունք է։ Հայերենի բառային հիմնական ֆոնդի հնդեվրոպական տարրերը հնդիրանական լեզուներին հատուկ հնչյունական օրինաչափություններ չեն ցուցաբերում։ Այդ պատճառով էլ, հակառակ Գ. Ա. Ղափանցյանի (К происхождению армянского языка, Ереван, 1946, էջ 40) կարծիքին, այս տարրերը չեն կարող ծագած լինել ոչ առաջին հազարամյակի սկյութա-սակերի ցեղերի (արևելա-իրանական, լեզվական տեսակետից սլավոններին ոչ ազգակից) լեզվից, ոչ էլ երկրորդ հազարամյակի (մ. թ. ա.) Միտանների «Մանգա» հնդկալեզու ցեղերի լեզվից։ Չի կարելի նաև ապացուցված համարել, որ հենց այդ իսկ ցեղերն են կրում «Մանգա» անունը։ Գ. Ա. Ղափանցյանը չտալանց լայն է օգտագործում այս տերմինը տարբեր սառուգաբանությունների համար, կապելով Manda տերմինի հետ. օր.՝ քրդ. kurmanjî-ն և նույնիսկ արամեական կրոնական տերմինը mandae di hayyā «կյանքի իմացություն» (V'jd- «գիտենալ» արմատից), տես Լайаса—колыбель армян, էջ 139։ Իր աշխատությունների մեջ բառերի և տեղանունների ճարտարավոր դուգադրություններ բերելով՝ Գ. Ղափանցյանը սկզբում փորձում էր փոխառության օրինակները անջատել ազգակցության օրինակներից (այսպես՝ որոշ դեպքերում Ch'ito-armeniaca աշխատության մեջ), բայց իր ավելի ուշ շրջանի աշխատություններում նա շատ հազվադեպ է կանգ առնում հնչյունական համապատասխանությունների օրինաչափությունների վրա և այդ շրջանի նրա աշխատություններում մեծ մասամբ անարավոր չէ որոշել, թե խոսքը լեզուների ազգակցության մասին է, թե՞ փոխառության դեպքում պատահական համահնչյունություն, քանի որ այդ համահնչյունությունը վերլուծման չի ենթարկված։

Գ. Ա. Ղափանցյանը իր մի հարք աշխատություններում¹ մատնանշել է հայերենի բազմաթիվ բառային նմանությունները նեոսիական-խեթերենի և հին-անատոլյան այլ լեզուների հետ: Ճիշտ է, այս նմանությունների «րոշ մասը վերաբերում է հնդեվրոպական ընդհանրությանը ամբողջությամբ առած², իսկ մի մասն էլ կասկածելի է, քանի որ չունի հնչյունական օրինաչափական համապատասխանություն³, բայց և այնպես, հին-անատոլյան (խեթական) զգալի շերտի առկայությունը հայոց լեզվի մեջ կասկածից դուրս է: Սակայն այս զեպքում կարող է խոսք լինել փոխառությունների մասին, որոնք միանգամայն ընկալված են հայերի՝ Փոքր Հայքի խեթականացած տերիտորիայում երկարատև ընկալվելու պատճառով: Որոշելու համար, արդյոք փոխառություն է, թե՞ ազգակցություն, անհրաժեշտ է պարզել հնդեվրոպական հիմք-լեզվի, հին-անատոլյան լեզուների և հայերենի ձևերի միջև եղած օրինաչափական համապատասխանությունների ընդհանուր պատկերը: Եթե հայերենը նույն ձևով է անդրադարձնում հնդեվրոպական հիմք-լեզվի երևույթները, ինչ որ հին-անատոլյան լեզուները, և այդ երևույթների անդրադարձման տվյալ տիպը տարբերում է ըստ այլ լեզուները միասին հնդեվրոպական մյուս լեզուներից, ապա կարելի է խոսել հայերենի հին-անատոլյան լեզուներին ազգակից լինելու կամ նույնիսկ նրանց թվին պատկանելու մասին: Այդ կնշանակեր, որ հնարավոր է վերականգնել հայ-հին-անատոլյան ճյուղի համար ընդհանուր հիմք-լեզու, որի միջոցով էլ հայերենը կկապակցվեր համահնդեվրոպականի հետ: Հակառակ զեպքում հայերենի՝ խեթերենին անմիջապես ազգակից լինելու հիպոթեզը պետք է վերանայ:

Նույն կարգն անհրաժեշտ է պահպանել նաև հայերենի և թրակափոյուզիական լեզուների նմանությունների քննարկման զեպքում: Սակայն պետք է նշել այստեղ, որ մեզ հասած լեզվական նյութի բացառիկ նվազությունը պատճառով, հայոց լեզվի զուգադրումը փոյուզիերենի և թրակիերենի հետ չավագանց գծվար է. թեև ոչ անհնարին:

¹ Տես առաջին հերթին Գ. Ա. Капанцян, Хайаса—колыбель армян, Ереван, 1947, էջ 80—83, Գույնի Chetto-armeniaca, Эривань, 1931—32, Գույնի Хеттские боги у армян, Ереван, 1940, էջ 11 և այլն: Առաջին աշխատության մեջ նա բերում է 54 հայկական բառ խեթական ծագումով, բայց նրա կողմից առաջարկած ստուգաբանություններից առնվազն 24-ը, ըստ մեր կարծիքի, կամ վերաբերում են համահնդեվրոպական արմատներին, կամ կասկածելի են: Գ. Ա. Ղափանցյանի ստուգաբանություններից մի բանիսը (հատկապես տեղանունների) հիմնված են զուտ արտաքին հնչյունային նմանության վրա: Այնուամենայնիվ համոզիչ գուգադրությունների թիվը գգալի է:

² Օրինակ՝ հայ. gerph- (օրինաչափորեն հ.-ե. *gⁿ herb-ից) և խեթ. karp- «վերցնել, կողոպտել», հայ. mal- և խեթ. mal- «աղալ», հայ. mal^h- «մաղթել» և խեթ. mald- «բարձրաձայն կարգալ» և այլն:

³ Օրինակ՝ խեթ. hatt-> հայ. hat-anem «հատանեմ» (h > h), բայց խեթ. handais «աաք» > հայ. xand «խտնդ» (h > x), իսկ խեթ. hand-and-atar «խնամատարություն, կամք, ձեռնանշան» > հայ. yandz-andz-em «յանձանձեմ» (h > y). հայ. sar, sarak «սար, սարակ», ոչ թե խեթական, այլ իրանական ծագում ունի (պարթ. sar, sarak «գյուխ») նույնպես և sak «մաքս, սակ»: Հնարավոր է, որ խեթական գրաֆիկ ի-ն ոչ թե մեկ, այլ մի քանի տարբեր հնչյուններ է արտահայտում, որոնք տարբեր անդրադարձում են ստանում հայերենում. բայց գուգադրությունների համոզիչ լինելու համար, դա պետք է ի հայտ բերվեր և ցույց տրվեր առկա օրինաչափությունը:

Պետք է հիշատակել ռուլդարական գիտնական Դ. Դեչևի տեսակետը¹։ Այդ տեսակետի համաձայն, հայերենը որոշ չափով ազդակից է թրակիերենին, բայց ոչ փոյուգիերենին, քանի որ Դեչևի կարծիքով թրակիերենը և փոյուգիերենը չեն կարող նույն ճյուղին պատկանել, որովհետև թրակիերենը և հայերենը պատկանում են satəm (հ.-ե. ա, g' հնչյունները սիրիլանդաց-նոդ) լեզվախմբին, իսկ փոյուգիերենը centum (k', g'-ն ապաքմայնացման ենթարկող) խմբին։

Դ. Դեչևի փաստարկմանը մենք գեոևս կվերագրած ենք, իսկ առայժմ նշենք այն հանգամանքը, որ նաև հին-անատոլյան ճյուղի սահմաններում լեզուների մի մասը, ըստ երևույթին, պատկանում է satəm լեզուներին (լի-կիերենը, Վիերուգլիֆիկ խեթերենը), իսկ մյուս մասը՝ centum լեզուներին (նեսիական-խեթերենը), չնայած այդ լեզուների ակներև ազդակցությունը։ Հնարավոր է, որ satəm և centum լեզուները ոչ թե երկու սկզբնական լեզ-վախմբեր են՝ հնգելրոպական հիմք-լեզվի նախնական գիալեկոներից ծա-ղող, այլ տարրեր միջավայրում և տարրեր ժամանակ առաջացած երկու տիպ։

Քննենք հիմա մեզ հետաքրքրող հնգելրոպական լեզուների և հնդ-եվրոպական հիմք-լեզվի վերականգնված ձևերի հնչյունական համապատաս-խանությունները։

Նախօրոք նկատենք, որ մենք հնգելրոպական լեզուների ինքնուրույն վերլուծման հավակնություն չունենք և օգտագործում ենք մասնագետների պատրաստի եզրակացությունները։ Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ թրա-կիերենի, փոյուգիերենի, հայերենի, խեթերենի և այլ լեզուների համապա-տասխանությունները հնգելրոպական հիմք-լեզվի հետ սահմանված են յու-րաքանչյուր լեզվի համար անկախ։ Յուրաքանչյուր լեզվի հետադոտոդները չեն կրել ուրիշ լեզուների վերաբերյալ արված եզրակացությունների քիչ թե շատ էական ազդեցությունը. ուստի և կարելի է համարել, որ նրանց մեջ երևան բերվող նմանությունները իրերի գրությունը օբյեկտիվ կերպով են արտացոլում։

Թրակիերենի և ալբաներենի հնչյունարանական տվյալները բերվում են ըստ Դ. Դեչևի, հայերենի՝ ըստ Ա. Մեյերի, Հ. Հյուբշմանի և Հ. Աճառ-յանի, նեսիական-խեթերենի՝ ըստ Ի. Ֆրիդրիխի՝ այն ուղղումներով, որոնք առաջարկել է ինձ Թ. Վ. Դամդերիձեն (առնված են փակագծերի մեջ)։ հնգելրոպական արմատները տրվում են ըստ Յու. Պոկորնու բառարանի։

2. ՀնՁՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայերենի հարաբերակցությունը մյուս հնգելրոպական լեզուներին հետ պարզելու համար, մենք կօգտագործենք միայն ամենարճառ ընդհանու-րական համապատասխանությունները։ Մենք մի կողմ ենք դնում ինչպես այն հնչյունները, որոնք ընդհանրապես քիչ էին փոխվում առանձին հնդ-եվրոպական լեզուներում, այնպես էլ ընդհանրապես հնչյունային կապակ-ցությունների ազդեցությամբ տակ բաղմապիսի փոփոխությունների են-թարկված հնչյունները։

¹ Д. Деся, Характеристика на тракийския език, София, 1952, էջ 46 և 106։ Պետք է նշել, որ Դ. Դեչևի ընդհանուր կարգի մի շարք եզրակացությունները, որից ա' թրակի-երենի ծագման վերաբերյալ՝ իրանական և «էտրուսկոնդ» լեզուների խաչավորումից և այլն, զժվար է ընդունել։

Լեզուներ	Հնչյուններ																	
Հ.-Բ.	*e	*o	*a	*ē	*ō	*a ⁸	*p	*t	*b	*d	*bh	*dh	*k'	*g'	*g'h	*k ^w	*g ^w	*g ^w h
Կելտ.	e	o	a	ī (ē)	a(u)	a ⁸	—	t	b	d	b	d	k	g	g	k	b	g
լատ.	e	o	a	ē	o	ā ⁸	p	t	b	d	f(b)	f(d)	k	g	n	k ^w (p)	g ^w (v)	f(v)
հուն.	e	o	a	ē	o	a ⁸ > ē	p	t	b	d	ph	th	k	g	kh	p(t)	b(d)	ph(th)
ալբ.	ie	a	a	ō	ē	a ⁸	p(ph ⁴)	t(th) ⁴	b ⁶	d ⁵	b	d	s(ð) ⁶	z(ð) ⁶	z(ð) ⁷	k(s)	g(z)	g(z)
թրակ.	ε (ie, ia)	a	a	e (ie, ia)	u(ιι)	a	p(ph) ⁴	t(th) ⁴	?	t	b	d	s(ð) ⁶	z(ð) ⁶	z(ð) ⁷	k(kh?)	g??	g
փոյունդ.	e (i) ²	o	a	e (ē, i?)	u(u)	a(ā) ⁸	p(ph) ⁴	t(th) ⁴	?	t	b	d	s(k) ⁷	z(k) ⁷	z(g) ⁷	k?	b	g
հայ.	e (i) ³	o	a	i	u	a	h, w < *ph	th, h	p	t	b	d	s	c	dz	kh	k	g, dz
գերմ.	e	a	a	ē	ō	o	f	θ ⁸	p	t	b	d	h(g)	k	g	hw	kw	g
սլավ.	e	o	o	ie	a	a	p	t	b	d	b	d	s	z	z	k(č)	kw	g
րալթ.	e	a	a	ē	ū (ō)	ō	p	t	b	d	b	d	š ⁸	z ⁸	z	k	g	g(ž, dz)
հին-հնդկ.	a	a	a	a	a	a ⁸	p	t	b	d	bh	dh	ç	ǰ ⁸	h	k(č)	g	g
հին-իբրան.	a	a	a	a	a	ā ⁸	p	t	b	d	b	d	s	z	z	k(č)	g(j)	gh(lj)
նես.-իսթ	Հ.-Բ. ձայնավորների անդրադարձումը հին-անատոլյան լեզուներում միատեսակ						p	t	p/b	t/d	p(ɸp)	t(tt)	k	k/g	k/g	kw	kw	gw
«հիեր.-իսթ»	չէ և լրիվ չափով պարզ չէ:						p	t	p	t	?	?	s'	?	?	kw	?	?
«թոխար.»	e	o	a				p	t	?	t	p	t	k	k	k	k	k(ç)	k

² Հ.-Բ. e > i (նաև հնարավոր է, հ.-Բ. e > i) ըստ երևույթին փոյունդի բարբառներից մեկում:
³ Հ.-Բ. e > i ընդհանրապես նախորդելիս:
⁴ Գրավոր հաղորդումով համարյա թե միշտ p, t, սակայն հուն. φ, θ-ով գրելու առանձին դեպքերը ցույց են տալիս, ըստ երևույթին, որ առկա է եղել թեթև հազագ (p^h, t^h): Կան b, d (խլացած)-ի հետ հերթադալոթյան դեպքեր:
⁵ b, d խորհրդանիշները նշանակում են խլացած բաղաձայններ, մոտ p, t-ին:
⁶ Հնչյունը չ-ի կամ ծ-ի միջոցով արտահայտելու տատանումները, ըստ երևույթին, ցույց են տալիս, որ արտասանությանը ճշգրիտ կերպով չի համապատասխանում ոչ այս և ոչ այն հունական հնչյունին:
⁷ Հ.-Բ. k' > k, g'h > g միայն որոշ կոմբինացիաներում (սահունների ներկայությունում):
⁸ Այս տառերը ևս թավատառ համարել:

Համեմատության հիմք դարձնենք պայթական բաղաձայնների խումբը (բացառությամբ հաղվագյուտ հանգես եկողների), ինչպես նաև հիմնական, խոնանտների խմբին չպատկանող ձայնավորները և այդ հնչյունների տրվյալներով, աղյուսակի ձևով, ներկայացնենք հնդեվրոպական լեզուների հարաբերակցությունները: Աղյուսակում թավատառով են առանձնացված հայկական համապատասխանությունները և մյուս լեզուների համապատասխանությունները այն դեպքում, երբ հնդեվրոպական հնչյունների անդրադարձումները համընկնում են կամ շատ մոտ են իրենց անդրադարձումներին հայերենում:

Հարկավոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ հայերենի հնչյունները, անկասկած էական փոփոխությունների են ենթարկվել խուրրի-ուրարտական և կովկասյան սուբստրատի ազդեցության տակ (տես № 1 աղյուսակը):

Փակագծերում (բացի այն դեպքերից, որոնք վերապահված են ծանոթագրություններում) նշված են անդրադարձումների տարբերակները, որոնք առաջանում են որոշ հնչյունային կոմբինացիաների պայմաններում:

Աղյուսակում բերված թրակիական, փոյուղիական և հայկական համապատասխանությունները հանգես են դալիս հետևյալ օրինակներում՝

Հ.-ե՝ e՝ թրակ. -zan, zen և այլն, ցտոհմ, esb- ժիժ. փոյուղ. ab-biri-to ժերված կլինիժ, ab-ber-et ժերերիժ, e-da-es ժդեցժ. հայ. cin ժծինժ, e-ber ժեբերժ, es ժէշժ, (հ.-ե. *g'en-, *bher- *ek'w- արմատներ): Հմմտ. ժհերոգլ.-խեթ.ժ as'(u)was ժժիժ, հուն. gen-os, հին հնդկ. janah ցտոհմ և այլն:

Հ.-ե. o՝ թրակ. skal-me ժթուր, սուսերժ, -as(-us) ուղղ. հոլովի վերջավորություն. փոյուղ. mos(s)u-na ժաշտարակժ, -os ուղղ. հոլովի վերջավորություն. հայ. ost ժոստժ, ot-n<hot-n ժոտնժ (հ.-ե. *skwel- || *skwol- *mok'u-, *-os, *osd-, *pod- արմատներ). Հմմտ. ժհերոգլ.-խեթ.ժ pat ժոտժ, հուն. pod-a ժոտժ (հայց. հոլ.), օս. maesu-g ժաշտարակժ<հին-իրան. *masu- և այլն:

Հ.-ե. a՝ թրակ. -apa ժջուրժ, փոյուղ. satine ժկաոքժ, հայ. açem ժածեմժ (հ.-ե. *ab-, *k'at-, *ag'- արմատներ):

Հ.-ե. ē՝ թրակ. Trē-r-, Trie-r-, Trar- (=Tria-r-) ցեղի անուն. փոյուղ. e-da-es ժդեցժ, matar ժմայրժ, հայ. mayr<*mahir<*mathir ժմայրժ, mi ժմիժ, ժխտում (հ.-ե. *trēu-, dhē-, *mater, *mē). Հմմտ. նես.-խեթ. t'dai-, tē-, հուն. the- հին-հնդկ. dha- ժդեկժ և այլն:

Հ.-ե. օ՝ թրակ. Rome/i, Rūmi հատուկ անվան մաս, to-n ժնվերժ(?) (հատուկ անվան մաս). dilos ժտուն, ընտանիքժ (-os-ը այստեղ հունական վերջավորություն է). փոյուղ. dūmos ժժողով, սրբազան կոլեգիաժ, giuros ժոսկիժ. հայ. tu-r-kh ժտուրքժ (հ.-ե. *rom-, *dō-n-, *dō-r-, *dhol- || *dhel-, g'hlo-ro-). Հմմտ. հուն. dor-on ժնվերժ, khlōr-os ժգեղնավուն-կանաչժ, հին հնդկ. dā-n-am ժնվերժ և այլն:

Հ.-ե. a՝ թրակ., փոյուղ. Ma աստվածուհու անուն. փոյուղ. matar. հայ. mayr ժմայրժ (հ.-ե. mā, māter արմատներ):

Հ.-ե. p, t՝ թրակ. -para, -phara, -pera ժշուկաժ. pi- ժբացի, ավելիժ. -thur-d-, -thiur-d-, -tiur-d- հատուկ անվան մաս. -tri ժերեքժ. փոյուղ. Appas, Aphpha հատուկ անուն. matar ժմայր, հայ. ere-kh<*hre-h<*threy-es ժերեքժ, mayr<*mahir<*mathir ժմայրժ. orth ժորթժ, het<*phet ժհետքժ,

ew ժև» (հ.-ե. *per-, *twer-do- || *tur-do-, *tri-, *trey-es, *mater, *crt-, *led-, *epi-): Հմմտ. հիերոգլ.-խեթ. tra-, նես. խեթ. t(a)ray-, հին-հնդկ. tri., նես. խեթ. ped-an ժանդ», հուն. epi «վրա, հետո», հին-իրան. apī «վրա, հետո», pada- «հետք»:

Հ.-ե. b, d՝ թրակ. Ut-us գետի անուն, Tomi բնակավայրի անուն. փոյուգ. zet-na «դարպաս», wit-e-to «գիտում, նայում էր». հայ. get «դեղ», het «հետք» (հ.-ե. *wod- || *wed-, *dem- || *dm-, *g'hed-, *weid- || *wid-, *ped-): Հմմտ. խեթ. wat/dar, հուն. hud-ōr «ջուր», հին-հնդկ. ud-ra-h «ջր-սամույր, ջրային կենդանի» և այլն:

Հ.-ե. bh, dh՝ թրակ. Bendis ամառանույթյան աստվածուհի՝ berga/e/i-տափ, բաբձունք» (g'h-ի գիտմիլյացիայով, ինչպես ուսերենում՝ «beper»), -diz(a) ամբողջ. փոյուգ. ab-ber-et «կրկին». հայ. bardzr «բարձր», ber-em «բերեմ» (հ.-ե. *bhendh-, *bhiereg'h- || *bhrg'hu-, d'leig'h-), Հմմտ. նես.-խեթ. parku-s «բարձր», հուն. (հոմեր.) e-pher-e «բերում էր», հին-հնդկ. a-bhar-at «բերում էր» և այլն:

Հ.-ե. k', g', g'h՝ թրակ. ther-m- «ցեղ», ցեղանվան մի մասնիկ, esb «ծի», -zen, -zan, -san «տոհմ, աղն», dero-, dur- «ցանկապատ», տեղանունների մաս. փոյուգ. sati ne, sati-lla «կառք», zet-na «դարպաս», zel-ki-a «կանաչեղեն», բանջարեղեն», mos(s)u-na «աշտարակ» (բայց k(e)ne-man-, knu-man- «դամբարան, հուշարձան», e-little-tik-men-os «կանխորոշված, դատապարտված, անիծված». հայ. ser «սեռ», ser-m-n «սերմ», sirt «սիրտ»: eš «էջ», sayl «սայլ», cin «ծին», cun-r «ծունր», bardz-r «բարձր» (հ.-ե. *k'er, *k'er-mo-, *ek'w-, *kerd- || *krd-, *g'enu- || *g'onu-, g'en- «ծնել», *g'her- || *g'hr-, *k'at-, *g'hed-, *g'hel-, *mōk'u, *g'en- || *g'η- «գիտենալ», *deik'- || *dik'-): Հմմտ. խեթ. k/genu «ծունկ», հուն. gunē, հին-իրան. jani- «կին» և այլն:

Հ.-ե. k^w, g^w, g^wh՝ թրակ. ?sak-, zak- հատուկ անվան մաս, gen-t-on «մսի կտոր, կտրվածք», ger-m- «ջերմ» (տեղանունների մաս). փոյուգ. ?ke շաղկապ (նավանարար հուն. kai-ից), ban-ek-os, bon-ek «կին», Germe տեղանուն. հայ. e-likh «ելիք», ke-am «կեամ», kin «կին», gan «հարված», dzer-m < *ger-m «ջերմ» (հ.-ե. *?k'ak^w - *g^wlon- || *g^when-, *g^wher-mo. *?k'e. *g^wenu-, *lek^w-, *g^wei-), Հմմտ. խեթ. kwen-, kun- «հարվածել, սպանել», հին-հնդկ. garā-ma- «ջերմ», հուն. bi(w)-os «կյանք», ther-mo-s «ջերմ» և այլն:

Բերված աղյուսակից երևում է, որ հնչյունային համակարգի զարգացման զուգակցումները հայերենի և այն լեզուների միջև, որոնք շրջափակի մեջ են առնված, սխառեմատիկ բնույթի են կրում այն դեպքում, երբ մյուս զուգակցումները կամ պատկանում են հնչյունը իր սկզբնական ձևով (e, o, a, a) պահպանվելու փաստերի թվին, կամ պատահական բնույթի են կրում:

Քմային միջնալեզվային *k', *g', *g'h հնչյունների հաղորդման սխառեմատիկ զուգակցումը հայերենի, սլավոնա-բալթյան և հնդիրանական լեզուների միջև թեև նկատելի է, սակայն մեկուսացած բնույթ է կրում, քանի որ մյուս կողմից, հնչյունների այլ խմբերի (ոչ քմային պայթականների) անդրադարձումները չեն զուգակցում:

Հայերենի և թրակա-փոյուգիական լեզուների միջև զուգակցումները

նույն երևույթը կարելի է դիտել և ուրիշ, ազյուսակի մեջ չմտցված, ան-
դրադարձումների վրա. օրինակ՝ բնորոշ է կ'տ խմբի պարզեցումը, որը կա-
տարվել է դեռևս կ'-ի սիրիլանտացումից առաջ, այսինքն ըստ երևույթին
դեռևս թրակա-փոյուզիական հիմք-լեզվում: Այդ երևույթը բնորոշ է ալրա-
ներենի և թրակիերենի համար, բայց նույնպես և փոյուզիերենի և առնը-
վազն մեկ հատկանշական դեպքում հայերենի համար: 8 թիվը հ.-ե. ok'to-
փոյուզիերենում հնչում է otu¹, հայերենում՝ uth, Հմմտ. հուն. okto, լատ.
octo, գոթ. ahtau, հին-հնդկ. açta:

Հ.-ե. *m, *n թրակիերենում² և հավանական է՝ փոյուզիերենում կար-
ծես թե տալիս են հայերենին համանման (an, am) անդրադարձում: Սկզբի
հ-ն տալիս է h (կամ զրո) բացի հայերենից նաև հունարենում, իրա-
ներենում (երկրորդային), փոյուզիերենում³ և հազվագեպ՝ թրակիերենում⁴
և այլն:

Տարածայնությունները հայերենի և թրակա-փոյուզիական խմբի լե-
զուների (ներառյալ ենթադրարար և ալրաներենը) միջև աննշան են: Նրանք
հանգում են մասամբ այս կամ այն լեզվում արխայիկ ձևերի պահպանմանը.
օրինակ՝ հ.-ե. երկար *ē- համապատասխանում է ի-ին հայերենում, ie (ia)
կամ ē-ին թրակիերենում և e (կամ ē?)-ին փոյուզիերենում. հ.-ե. *p, *t
ալլաներենում, թրակիերենում և փոյուզիերենում ունեն հազագային երան-
դավորում և միայն հազվագյուտ դեպքերում գրավոր արտահայտություն

¹ Փոյուզ. otuwoiwetei-ի մեկնաբանությունը որպես «ութերորդ տարում» պատկանում
է Ռ. Մեստերին, որի եզրակացությունները հաճախ հապճեպ են, բայց տվյալ դեպքում
համոզեցուցիչ են թվում: Ըստ Ա. Մեյեի (Esquisse d'une grammaire comparee de l'arme-
nien classique, Vienne, 1903, էջ 13) հայ. uth (հավանական է *owth-ի միջոցով) < *opto
< *ok'to ազգվելով *septem-ից (հայ. ewthn). սակայն հնարավոր է և այլ անցում, օր.
*ok'to > *ot(t)o > *otho > uth: Թրակիերենում և ալրաներենում k't > t կանոնավոր կերպով,
pt > t՝ սպորադիկ:

² Փոյուզ. materan < հ.-ե. māter m/ն «մայր» (հայց. հուլ.)՝ մի երևույթ, որ հա-
կանչական է հոլովական վերջավորությունների համար հնդեվրոպական բոլոր լեզուներում,
հնդիրանական լեզուների և լատիներենի բացառությամբ. սակայն հմմտ. թրակ. aksi-
«մուկ» < *n-k'si- «ոչ լուսավոր» և An-am- < n-ṇibh- «անջուր, ջրազուրկ» (նման ձևով
հունարենում և հնդ-իրանական լեզուներում):

³ Փոյուզ. ewe < *hewe < *sewe «իրեն»:

⁴ Հմմտ. Salmidessus և Halmidesos (թրակիական բնակավայրի անուններ) վա-
րիանտներ:

⁵ Հարկավոր է նաև ուշադրություն դարձնել հունարենի, թրակա-փոյուզական լե-
զուների և հայերենի մի բնորոշ առանձնահատկությանը, որն ունեն, սակայն փոքր ինչ
տարբեր ձևով, նաև հին-անատոլյան լեզուները: Խոսքը e- նախածանցի (?) մասին է, որի
ձևարանական նշանակությունը պարզ չէ:

Այսպես, օրինակ՝ հ.-ե. *mē, *me տալիս է հնդ-իրանական լեզուներում ina,
լատիներենում me(d), գերմաներենում mi-k, սլավոներենում me > *me-n, սակայն հուն.
e-me, հայ. is < *im-s, նես.-թեթ. a-m-uk ենթադրում են հ.-ե. *e-me ձևը:

Այնուհետև հ.-ե. *new Դ «ինն» հնդ-իրանական լեզուներում տալիս է nava,
լատիներենում՝ novem, գերմաներենում՝ neun, բայց հունարեն enne(w)a, թրակ. ana-
< *enan. հայ. inn ենթադրում են հ.-ե. *e-newn ձևը: Թեև լեզվական այս երևույթը չի
բաժանում հայերենը հին-անատոլյան լեզուներից, սակայն էականն այն է, որ այն հաս-
տատում է նրա կապը թրակա-փոյուզիական լեզուների (և նրանց միջոցով հունարենի)
հետ:

Տեղեկագիր 11-5

են ստանում հունական *ph, th*-ի օգնությամբ. հայերենում կարելի է վըս-
տահությամբ վերականգնել անցում հ.-ե. **p, *t > *ph, *th*, որոնք հետա-
դյոսում տվել են *h* (*w*), *t* (*h*). սրան է վերաբերում հ.-ե. **k' *g' >* հըն-
չյունների պահպանվելը փոյուգիերենում *k, g* ձևով *l, m, n* հնչյուններից
առաջ¹: Մասամբ խոսքը այդ խմբի առանձին լեզուների խնդիրային զար-
գացման ընթացքում եղած նորակազմությունների մասին է (հ.-ե. **g' >*
փոյուգ. *b*, հայ. *k*. հ.-ե. **e >* հայ. *i*, ալբ. *o*. հ.-ե. **o* թրակ., ալբ. *a*): Սրանց
շարքը պետք է դասվի հ.-ե. **r, *l >* թրակ. *ur, ul*, հայ. *ar, al* անցումին հա-

Այս բոլորը նշանակում է միայն, որ հայերենը չի կարելի անմիջա-
պես սերել ոչ փոյուգիերենից և ոչ էլ թրակիերենից, այլ որ այս երեք լե-
զուները (հնարավոր է նաև ալբաներենը) ծագում են մեկ ընդհանուր հիմք-
լեզվից և ունեցել են խնդիրային զարգացում:

Վերականգնելով հ.-ե. հնչյունների հետևյալ անդրադարձումը են-
թադրյալ թրակա-փոյուգիական հիմք-լեզվում², մենք կստանանք թրակիե-
րենի, փոյուգիերենի և հայերենի բոլոր համապատասխան ձևերի զարգաց-
ման բավարար բացատրություն (տես աղյուսակ № 2):

Պետք է նշել, որ թեպետ հունարենը բազմաթիվ պատճառներով ալիլի
մոտ է կանգնած թրակ-փոյուգիական խմբին (հայերենը ներառյալ) քան
հնդեվրոպական մյուս լեզուները, սակայն անհնար է սահմանել հունա-
րենի և թրակա-փոյուգիական լեզուների համար ընդհանուր սկզբնաձևեր,

¹ Դ. Դեյլեն և մի քանի այլ գիտնականներ թխտում են թրակիերենի և փոյուգիե-
րենի հնդեվրոպական լեզուների միևնույն ճյուղին պատկանելը, թեև ընդունում են
թրակիերենի և փոյուգիերենի միջև բազմաթիվ ընդհանուր զգալի առկայությունը, ինչ-
պես հնչյունարանության բնագավառում, այնպես էլ բառապաշարում և նույնիսկ օրոմաս-
տիկայում, ընդ որում Դ. Դեյլեն հենվում է փոյուգիերենի *centum* խմբին ենթադրյալ
պատկանելության վրա: Նա վկայակոչում է այն հանգամանքը, որ հ.-ե. **k', *g', *g'h >*
փոյուգ. *S, Z, Z* անդրադարձման հավաստի բոլոր օրինակները այն դեպքերին են վերա-
բերվում, երբ այդ բաղաձայնները կանգնած են ստաջին շարքի ձայնավորների (*i, e*) առջև
և տեսնում է այստեղ *k, g, g* հնչյունների երկրորդային քմայնացում: Փոյուգ. *satine*
«կառք» և *moosuna* «աշտարակ» բառերը նա բացատրում է որպես փոխառություն իրա-
նական լեզուներից և ուշադրություն է հրավիրում *k(e)nemjan, knumjan* «հուշարձան, դամ-
բարան» (ըստ երև. էյթին **u en- || *g'n- «դիտելու, ծան-»*) և *e-tittle-tik-men-os* «գառա-
պարտված, անիծյալ» (հավանաբար հ.-ե. **deik'-*) բառերի վրա: Մական իրանական
այն լեզուներում, որոնց հետ կարող էր շփվել փոյուգիերենը **ka t-, *s i t-* արմատ մեղ
հետաքրքրող իմաստով գոյություն չունի, իսկ *mos(s)un* բառի ձայնավորումը թույլ չի
տալիս այն փոխառություն համարել իրաներենից (հ.-ե. **mok'u-* իրաներենում պետք է
տա **m: su-*, որը մենք հանդիպում ենք օս. *Maecui-* «աշտարակ» բառում): Ըստ երևույ-
թին հ. ե. *k, *g', *g h* ապարմայնացել են փոյուգիերենում *l, m, n* սահունների ներ-
կայությամբ: Նման երևույթներ գիտվում են նաև սլավոնական լեզուներում: Բնչ վերա-
բերվում է *k, g, g*-ի երկրորդային քմայնացման, ապա նա սովորաբար տալիս է *C, Ć, Ž, Ǟ*
և ոչ թե **s, *z*: Պետք է նշել, որ հին-անատոլյան լեզվաճյուղի սահմաններում, ինչպես
ասվել է, կան ինչպես *s, tām* այնպես և *centum* լեզուներ: «Անցումը փափուկ միջքմային
հնչյուններից դեպի շշախան արտասանությունը կատարվել է յուրաքանչյուր բարբառում
մյուսներից անկախ» (A. Meje, Общеславянский язык, М., 1951, էջ 23):

² Իսկ կարող էր լինել արիպոյցիների (*ariponci*) լեզուն. նրանցից հարավ՝ համա-
ձայն հնադիտության տվյալների, ազրում էին հույների նախնիները, հյուսիս՝ սլավոն-
ների և դերմանայիների նախնիները, արևելք՝ իրանցիների ձայնի լեզվաբան չ. Պե-
դերսենը գուգամերձությունների ամենամեծ թիվը գտնում է հայերենի և հունարենի
միջև, ապա՝ հայերենի և գերմանական, հնդիրանական ու սլավոնական լեզուների միջև
թրակիերենը և փոյուգիերենը նա հաշվի չէր առել:

Աղյուսակ 2

Հ.-Ե.	Թր.-փռ.	Փոյուզ.	Հայ.	Թրակ.	Ալբ.
*e	*ie	e (i րարր.)	e (i)	e, ie (ia)	ie
*o	*o	o	o	a	a
*a	*a	a	a	a	a
*ē	*ie (ie)	ē (e, i ?)	i	e, ie (ia)	o ³
*ō	*ū (u)	ū (u)	u	u, iu	e ³
*a	*a (a)	a (a)	a	a	a
*p	*p ^h	p ^h	*ph > h, w	p ^h	p ^h
*t	*t ^h	t ^h	*th > th, h	t ^h	t ^h
*b	*b ¹	p	p	b, p	b ¹
*d	*d ¹	t	t	d, t	d ¹
*bh	*b	b	b	b	b
*dh	*d	d	d	d	d
*k'	*c' (k)	s (k)	s	s (ð)	s (ð)
*g'	*d' (g) ¹	d' (k)	*t' > ɕ	(d)z ² (ð)	z (ð)
*g'h	*d' (g)	(d) z ²	dz	(d)z ²	z (ð)
*k ^w	*k ^h	k ^h	kh	k ^h	k (s)
*g ^w	*g ^w (g ^w) ¹	b	k	?	g (z)
*g ^w h	*g ^w	g	g	g	g (z)
*m, *n	*m, *n	am, an	am, an	um, un l (am, an) j	um, un (em, en)
*r, l	*r, *l	?	ar, al	ur, ul	ur (ir, ri)

տարբերվող համահնդեվրոպական հիմք-լեզվի ձևերից: Ձևայած շատ կետերում համանման վարդաշմանը, հունարենը միևնույն ճյուղին չի պատկանում, ինչ որ փոյուզիերենը, թրակիերենը և հայերենը: Նույնը վերաբերում է և հնդեվրոպական մյուս լեզուներին:

3. ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ձևարանության այն փաստերի թիվը, որոնք ենթարկվում են զուգահեռության՝ անշտան է փոյուզիերենի և թրակիերենի տվյալների կցկտուր, լինելու պատճառով, ինչպես և այն պատճառով, որ հայերենում թեքածանցների քայքայման պրոցեսը շատ հեռու է գնացել (վերջին փանկի վերջին ձայնավորի և բաղաձայնի կորուստ): Այնուամենայնիվ այստեղ ևս մի քանի ցուցողական փաստ կա:

ա) Հարկավոր է ուշադրության առարկա դարձնել փոյուզիերենում և մի շարք դեպքերում նաև հայերենում որոշ անցյալ ժամանակների Ե-նախածան-

¹ b, d, g' խորհրդանշաններով նշանակում ենք խլացած հնչեղները:

² Հ.-Ե. g', g'h հնչյունների անդրադարձումը փոյուզիերենում դրավոր ձևով արտահայտվում է չուն. է ի միջոցով. դա կարող է նշանակել z, zd, dz, կամ, ըստ մեր ենթադրության նաև d', d:

³ Այս յուրահատուկ անցումը կարելի է բացատրել *ie, *iu-ից անցումային *ue, *eu ձևերի օգնությամբ: eu երկրաբան ալրաներենում նույնպես >e: Տես համանման անցում հին-ռուս. ó > *uo > *ue > *ui / ուկր. i:

ցի (աուգմենտի) օդնությամբ կազմվելու փաստը¹։ Աուգմենտը հատկանշական է միայն փոյուզիերենի, հայերենի, հունարենի և հնդիրանական լեզուների համար։ Վերջիններում այն ունի *a-ձևը*։ Այն բոլորովին բացակայում է հնդեվրոպական այլ լեզուներում, այդ թվում և հին-անատոլյան։

բ) Հնդեվրոպական լեզուներում լայն տարածված է տարբեր ձայնավորում ունեցող *-mn-* վերջածանցը, որը ծագում է չեզոք սեռի դերբայների, որոշ ածականների, ինչպես և չեզոք սեռի վերացական և այլ անունների կազմավորման համար։ Հայերենում կան այդ վերջածանցի հետքերը²։ Իսկ փոյուզիերենում *-men-* վերջածանցը բնորոշ է համապատասխան դերբայների կազմավորման համար։ Մական այն անվանական բառակազմության այս տիպը լիովին բացակայում է հին-անատոլյան լեզուներում³։

գ) Հայերենում կան հոլովման մի քանի տեսակներ, այդ թվում և հոլովական ձևեր, որոնք չեն ներկայացված հին-անատոլյան լեզուներում։ Միևնույն ժամանակ հին-անատոլյան լեզուների ազդեցության հետքերը հայերենի հոլովման վրա թվում են կասկածից վեր։ Այսպես, օրինակ՝ միայն հին-անատոլյան լեզուներն են, որ տրական և տեղական հոլովը տալիս են *-iya-ով*, որը հայկական *-i, -y-* ի նախատիպն է հանդիսանում։ Հայերենի հոգնակի թվի սեռական (այստեղից նաև որոշ այլ հոլովներ) հոլովի *-c* վերջավորությունը ծագում է ըստ երևույթին *-SK* ստացական հոդից, այսինքն կառուցվածքով (ոչ ձևով) սեռական հոլովի կազմությունը հայերենում համանման է հին-անատոլյան լեզուներին, որոնցում (նեսիական-խեթերենի բացառությամբ) սեռական հոլովի ձևը փոխարինվում է ստացական ածականի ձևով։ Բայց ընդհանուր առմամբ հայկական հոլովումը անվիճելիորեն հին-անատոլյան չէ։ *-it-*ով խեթական գործիական հոլովին հակադրվում է **-bhi>-b, -w, -v-ով* հոլովը։ խեթական *-as<*-os-*ով սեռականին հակադրվում է **-syo* և **-iyos>-y* և *i-*ով հոլովը։ խեթական եզակի թվի *-az-*ով բացառական հոլովին հակադրվում է *-e<*-etos(?)* հոլովը⁴։

Մենք վատ գիտենք փոյուզիական հոլովումը։ Հավանական է, սակայն, որ փոյուզիերենն ունեցել է մեկից ավելի հոլովման տիպ։

Սեռական հոլովը փոյուզիերենում կազմվել է, սակայն, *-os-*ով, պահպանվել է նաև *-i, -e, -ei-*ով հնդեվրոպական սովորական տրական հոլովը։ Սակայն դա ապացույց չէ փոյուզիերենի և հայերենի միջև ազգակցության բացակայության։ Մենք չունենք պարզ վկայություններ բացառական և գործիական հոլովների համար փոյուզիերենում, այսինքն հենց այն հոլովների, որոնք հայերենում չեն ազդվել հին-անատոլյան լեզուներից։ Այդպիսով, պարզ է միայն, որ փոյուզիական հոլովումը տարբերվում էր հայկականից

¹ Փոյուզ. *e-da-es* «դրեց», հայ. *e-d* «եղ», *e-ber* «երեբ», հմմտ. հուն. *e-the-san* «դրեցին», հոմեր. *e-pher-e* «բերում էր», հին-հնդկ. *a-dha-t* «դնում էր», *a-bhara-t* «բերում էր». հին-պարսկ. *a-bar-a* «բերեց»։

² *sarZumn* «շարժում»։ Նեսիական-խեթական՝ տեղի անուն կազմելու համար օդ-տաղործովոգ *-uman* վերջածանցը դժվար թե սրա հետ կապ ունենա և ամենայն հավանականությամբ ոչ հնդեվրոպական ծագում ունի։

³ խեթական անորոշ եղանակի *-uwar* (*-umar*) ածանցը, ի տարբերություն նրա, ինչի կարելի է եզրահանգել Գ. Ա. Ղափանցյանի մոտ ասվածից (*Chetto-armeniaca*, Эривань, 1931—1933, էջ 26), սրան չի վերաբերում։

⁴ Բայց հմմտ. *-ta* «հերոգլիֆիկ-խեթերենում»։

նրանով, որ հայկականում որոշ հոլովածները դուրս են մղվել հին-անատոլյան ձևերի կողմից: Բայց և այնպես հայկական հոլովումը, չնայած հին-անատոլյան ազդեցությանը, ինքնըստինքյան հին-անատոլյան չէ:

Այս բոլորը բացառում է հայերենը հին-անատոլյան ճյուղից ծագեցնելու հնարավորությունը, բայց և միևնույն ժամանակ ցույց է տալիս, որ հայերենը փոյուզիերենից անկախ է:

4. ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

Հայերենում հին հնդեվրոպական բառապաշարի մնացորդները մեծաքանակ չեն. փոյուզիերենից և թրակիերենից մեզ հայտնի են միայն սահմանափակ թվով պատահական բառեր: Այդ պատճառով էլ դժվար է սպասել, որ այդ սակավաթիվ թրակիական և փոյուզիական բառերը պատկանելիս լինեն հին հնդեվրոպական բառերի հենց այն խմբին, որոնք պահպանվել են հայերենում: Այսուամենայնիվ կարելի է նկատել մի քանի հատկանշական բառ այդ լեզուներից երկուսում և նույնիսկ բոլոր երեքում:

Մրան են վերաբերում առաջին հերթին ազգակցության այնպիսի տերմիններ, ինչպիսիք են հայ. hayr < *hahir < *phathir «հայր», mayr < *mahir < *mathir «մայր», elbayr < *erbahir < *brahir < *brathir «եղբայր»: Համենայն դեպս առաջին երկուսը (հնարավոր է երեքն էլ) բացակայում են հին-անատոլյան լեզուներում (այսպես, օրինակ՝ նես.-խեթ. attas, «հիերոգլիֆ» titas «հայր», նես.-խեթ. annas «մայր», համանման բառեր չկան): Փոյուզիերենում և նրան մոտ միսիերենում արձանագրված են բոլոր երեք բառերը: Նրանք հայտնի են նաև մյուս հնդեվրոպական լեզուներում:

Մյուս բնորոշ օրինակը՝ հ.-ե. *bher- «բերել» բայարմատն է. նա կա փոյուզիերենում և հայերենում, երկուսում էլ ber- ձևով, և հայտնի է հնդեվրոպական այլ լեզուների ճնշող մեծամասնությանը (հուն. pner-, հին-հնդկ. bhar- և այլն), հին-անատոլյան լեզուների բացառությամբ:

Հ.-ե. բայարմատ *dō- «նվիրել» կա հայերենում (ւս-ր-կէ տուրք) և, ինչպես կարծում է Դ. Դեչեր, թրակիերենում ևս (to-, կարգա tū-), բայց նեսիական-խեթերենում կա միայն t da- «վերցնել» և t/dai- || te- «տեղափոխել» (<հ.-ե. *dhē-): Հայկական ēš «էշ» (< *esw) ունի իր esb համապատասխանությունը թրակիերենում, ըստ երևույթին «ձի» նշանակությամբ¹. հայ. dzerm «ջերմ» (< *germ < *g^whermo-) ունի իր համապատասխանությունը ինչպես փոյուզիերենում, այնպես էլ թրակիերենում (տեղանուններ՝ germ-բաղկացուցիչ մասով) և ալբաներենում (zjarm «շոգ»): Խեթերենում *g^whermo- հ.-ե. արմատը բացակայում է, հատկապես բնորոշ է փոյուզի. satine «կառք» և satilla «սալակ» (երկնքում), Արջ համաստեղությունը և հայ. sayl «երկանիվ» սալ» < *sahil < *sathil²:

Այս համեմատությունները նույնպես ցույց են տալիս հայերենի նշանակալի մոտիկությունը փոյուզիերենին և թրակիերենին:

Իհարկե վերոհիշյալ պատճառներով հայերենի հին հնդեվրոպական բա-

¹ Ճիշտ է, esb նույն նշանակությամբ կա նաև լիկիերենում:

² Հ. Աճառյանը (Հայերեն արմատական բառարան, Երևան, 1927) sayl բառը փոյուզիական փոխառություն է համարում, սակայն ոչինչ չի խանգարում այդ բառը բուն հայկական համարել:

ռերի շատ ավելի մեծ մասը դեռևս չի դրսևում փոյուղիերենում և թրա-
կիերենում. այդպիսի բառերի հնդեվրոպական բնույթը ի հայտ է բերվում
մյուս հնդեվրոպական լեզուների հետ զուգորդվելիս, սակայն հնդեվրոպա-
կան հնչյունների անդրադարձման բնույթի տարբերությունը բոլոր այս
դեպքերում ցույց է տալիս, որ համեմատող լեզուները պատկանում են
լեզուների տարբեր ճյուղերին: Այսպես, օրինակ՝ հայ. «հետք» չի կարելի
դուրս բերել նես.-խեթ. ped-an «տեղ» բառից. քանի որ այն ծագում է
-phet-ից, հայ es-ը չի կարելի հանդեցնել «հիերոգլ.-խեթ.» as(u)was «ձի»
բառին, հայ. cun-ը «ծունր» չի կարելի հանդեցնել ոչ հուն. gonu, ոչ խեթ.
k/genu, ոչ էլ հին-հնդկ. janu-ին թեև նրանք բոլորը ընդհանուր ծագում
ունեն:

Փ. Ա. Ղափանցյանին հաջողվել է խեթա-հայկական բառային զուգա-
դիպումների մի շարք փաստեր ի հայտ բերել, բայց սրանք այդքան հաճախ
չէ, որ պատկանում են բառային հիմնական ֆոնդին¹, որքան համահնդեվ-
րոպական ծագում ունեցող բառերը, և չեն տալիս հնդեվրոպական հիմք-
լեզվի հնչյունների՝ հայերենի համար բնորոշ անդրադարձություն օրինա-
չափություններ²: Ամենայն հավանականությամբ մասամբ սրանք փոխա-
ռություններ են նեսիական-խեթերենից կամ «հիերոգլիֆիկ խեթերենից»,
մասամբ էլ սուրստրատից փոխառված բառեր են այդ երկու լեզուներում:

Ընդհանուր առմամբ նյութը ստիպում է ենթադրել, որ հայերենը հընդ-
եվրոպական լեզվախմբի թրակա-փոյուղիական ճյուղի ինքնուրույն լեզու-
ներից մեկն է, թեև նա խիստ փոփոխվել է իր հետագա ներքին զարգաց-
ման ընթացքում (փոյուղիերենը և թրակիերենը դեռ շատ մոտ են հիմք-
լեզվին): Տեսնենք հիմա, թե ինչպես կարելի է այս եզրակացությունը պատ-
մականորեն լուսարանել և օգտագործել հայկական էթնոգենեզի պրոբլեմի
համար:

5. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱԼԵԶՈՒ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Խեթական թագավորության ժամանակաշրջանի (մոտ. 1800 — 1200 թթ.
մ. թ. ա.) հուշարձաններում ակնհայտ տվյալներ չկան թրակա-փոյուղիա-
կան ցեղերի առկայության մասին Փոքր Ասիայում. համենայն դեպ ու
րելի է վստահություն չստանալ, որ Փոքր Ասիայի կենտրոնական և արևելյան
մասերում նրանք չեն եղել:

Սակայն 8-րդ և, հավանական է, 9-րդ դարերում Փոքր Ասիայի կենտ-
րոնական մասում արգեն դոյություն է ունեցել խոշոր Փոյուղիական
թագավորություն, որի թագավորները կրում էին Գորգիոս և Միդաս անուն-
ները. 8-րդ դարից մեզ հասել են հին փոյուղիերենով արձանագրություններ՝
ցրված այդ թագավորության ամբողջ տերիտորիայում: Հույն հեղինակ-

¹ Սրանց թվին են պատկանում Գ. Ղափանցյանի կողմից տրված համոզեցուցիչ
զուգահեռություններից այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ spand «սպանդ», korth «կարթ»,
kharth-mn «քրթնիջալ», masn «մասն», nuaš «նուաշ», loš «լոշալ», ċiwaš «ճիւաշ» և
այլն:

² Հնարավոր է հին-անառոյան ծագում ունեն հայ. akn «ակն» (հ.-հ. o > a) և sun.
san- < *swan «շուն», «հիերոգլ.-խեթ» š(u)w-ni- և š(u) Դ. A. Капанцян, Chetto-armeniaca.
Эрив: нб, 1931—35, ուշագր. դարձ. šame-n- (№ 67a), mšnapa (№ 43), spand- (№ 10),
appa (№ 55), kardmija- (№ 27) և այլ բառերի առթիվ բերված ծանոթագրություններին:

ներին դեռ 5-րդ դ. մեր թվ. ա. ձանձիւ էր փոյուղիացիների Բաղկաննէ-
րից գալու և նրանց թրակիական ցեղերի և հատկապէս բրիգերի ցեղի հետ
ազգակցութեան մասին ավանդութիւնը¹։ Հունական տվյալների համա-
ձայն, փոյուղիացիները բնակվում էին Անատոլիայի կենտրոնական գաղ-
տում Սանգար գետի հովտում (ս.Մեծ Փոյուղիա), ինչպէս նաև Պրոպոն-
տիսին կից շրջաններում (ս.Հելլենսպոնտական Փոյուղիա)։ Փոյուղիացիներ-
ին ազգակից էին համարվում միսիացիները՝ Փոքր Ասիայի հյուսիս-արև-
մուտան մասում²։ Փոյուղիացիներից հյուսիս բնակվող թիւները և բյու-
թիւները թրակիական ցեղեր էին համարվում և, համաձայն ավանդութեան,
նրանք եկել են Փոքր Ասիա 10—8-րդ դդ. մ. թ. ա. (Հերոդոտոսի վկա-
յությունը, թե նրանք թողել են իրենց եվրոպական հայրենիքը Ստրիցա գետի վրա գեղես Տրոյայի պատերազմից առաջ, հավաստի չէ-
աւելինց ավելի հավաստի են Արքիանոսի տվյալները նրա սթրիանիայի
պատմութեան մեջ)։

Հերոդոտոսը և Էվդոքս Կնիդացին ավանդութիւններ են պահպանել
հայերի և փոյուղիացիների ազգակցութեան մասին։ Այսպէս, օրինակ
Հերոդոտոսը գրում է (VII, 73), որ արմենները փոյուղիական գաղթա-
կաններ են (Φρυγῶν ἄποικοι), իսկ Էվդոքսը³, որ տարմենները դա մի ցեղ է
Փոյուղիայից և լեզվով շատ նման են փոյուղիացիներին (τῇ φωνῇ πολλὰ
φρυγίζουσι)։

Ասուրական և ուրարտական ազդյունները փոյուղիացիներին անվա-
նում են մուշկերա։ Սարգոն 2-րդի (721—705 թթ. մ.թ.ա.) տարեգրու-
թիւնների տվյալների համաձայն Մուշկու երկիրը գտնվում էր Թարալից
(Տափրոսի լեռներից այն կողմը)⁴ և սահմանակից էր Կիլիկիային (Քուէ)⁵։
Դա խոշոր պետութիւն էր, Ուրարտուին հավասար⁶, որի վրա կողմնորոշ-
վում էին Փոքր Ասիայի և Ասորիքի մանր պետութիւնները⁷։

Որպէս Մուշկու երկրի թագավոր հիշատակված է Միթան⁸, Այն քա-
ղաքները, որոնք հիմնված են եղել ասորեստանցիների կողմից Մուշկերի
երկրի սահմանում, նրանց՝ Տափրոսից հետ մղելու համար, տեղադրում
են Տափրոսի և Հալիս գետի (Ղլըլ Իրմակ) միջին հոսանքի միջև⁹։ Այս բո-
լորից պարզ է, որ Կենտրոնական Անատոլիայում գտնվող Մուշկու խոշոր
պետութիւնը իր Միթա թագավորի հետ չի կարող այլ ինչ լինել, եթե ոչ
Փոյուղիան և նրա Միդաս թագավորը։ Սովետական գիտութեան մեջ շատ
տարածված է մուշկերի նույնացումը հույն հեղինակների մոսխերի հետ,

¹ Herod. VII, 73; VIII, 134.

² Herod. VII, 74.

³ St ph. Byz. s. v. Ἀρμενία.

⁴ Տես. օր. գաւազասի սալահատակի արձանագրութիւնը, IV, 36—38 և այլն։ Թա-
րալը հարակից է եղել Կիլիկիային, Սարգոնի տարեգրութիւն, տող 172 (Սարգոն 2-րդի
բոլոր տեքստերը տե՛ս H. Winkler, Die Keilschrifttexte Sargons, Leipzig, 188).

⁵ Սարգոն 2-ի Տարեգրութիւն, տող 372—373։ Հանդիսավոր արձանագրութիւն,
տող 150—151։

⁶ Սարգոն 2-ի Տարեգրութիւն, տող 173։ Հանդիսավոր արձանագրութիւն, տող 31։

⁷ Սարգոն 2-ի Տարեգրութիւն, տող 173, տող 46 հետևյալը, D. D. Luckenbill, An-
cient Records of Assyria and Babylonia (ARAB), տեքստի ֆրագմենտ, II, § 214, և այլն։

⁸ Տես նախորդ վկայակոչումները։

⁹ Տես E. Forrer, Die Provinzeinteilung des Assyrischen Reiches, Leipzig, 1920.

իսկ այս վերջիններիս՝ մեսսերի վրացական էթնիկ խմբի հետ: Բանասիրական տեսակետից այս զուգադրումը Հական առարկություն չի առաջացնում, սակայն պետք է նշել, որ մոսսերը 6—5-րդ դդ. մ. թ. ա. և ավելի ուշ ապրում էին ոչ այնտեղ, որտեղ գտնվում էր պատմական Փոյուզիան և Մուշկու երկիրը, այլ Սև ծովի հարավ-արևելյան եզերքում (Պոնտոսում)²: Վրացախոս ղեղերի և ոչ մի հետք չի գտնվում Փոյուզիայում: Պետք է նշել, որ էթնիկական տերմինի նույնությունը հետո է էթնիկական նույնությունից երաշխիք չինելուց: Բավական է հիշատակել, որ Եվրոպայում միևնույն տերմինը նշանակում է և՛ «իտալացի» (գերմ. Welsch, լեհ. włoch), և՛ «ռումինացի» (ռուս. валлах) և՛ «կելտ» (անգլ. Welsh), որ «խեթեր» տերմինի տակ տարբեր ժամանակաշրջանի և ծագման տեքստերը հասկանում են նախախեթերին, նեսիական խեթերին, ճիւղերովիֆիլ-խեթերին, Ասորիքի արամեացիներին, փյունիկեցիներին, հրեաներին և այլ ղեղեր ու ժողովուրդներ: Շատ հավանական է, որ հնագույն վրացական տերմինությունով «մոսս» կամ «մեսս» են կոչվելիս եղել արևմտյան ծագումի վրացախոս կամ վրացականացած ղեղերը, օրինակ՝ ղեղեր, որոնք ծագում են այն տերիտորիայից, որը մի ժամանակ հոլատակ է եղել փոյուզիական պետությանը (այս իմաստով): Սակայն «մուշկեր» տակ անկասկած կառող են հասկացվել, և երևի մեծ մասամբ հասկացվել են, հատկապես թրակա-փոյուզիական լեզվախմբի հնդեվրոպական ղեղերը:

Ասուրական հնագույն տեղեկությունները մուշկերի մասին այն ժամանակաշրջանից են, որը դալիս է խեթական պետության անկումից անմիջապես հետո, 12-րդ դ. մ. թ. ա.: Ասորեստանի Թիգլաթ-Պալասար I թագավորը (1115—1077 թթ. մ. թ. ա.) իր արձանագրություն³ մեջ հաղորդում է. «Իմ թագավորության սկզբում 29000 մուշկեր և նրանց 5 թագավորները, որոնք (արդեն) 50 տարի է (ինչ) գտնվել են Ալզի և Պուրուլումգի (երկրներում)», որոնց կուրծքը ոչ մի թագավոր չի կարողացել հանդարտեցնել մարտում, և (որոնք) վստահ էին իրենց ուժերի վրա, իջել էին (լեռներից) և դրավել Կադմուխի երկիրը»։ Ալզին և Պուրուլումգին գտնվում էին Արածանիի հովտի ստորին մասում. Կադմուխին՝ Տիգրիսի ձախ ասիին, նրա վերին հոսանքում: Այդպիսով, մոտ 1165 թ., Խեթական պետության անկումից 1—2 սերունդ հետո, մուշկերի ղեղերը երևացին Մեծ Հայքի արևմտյան մասում: Պետք է կարծել, որ այդ ժամանակաշրջանում նրանք արդեն գտնվելիս են եղել դեպի արևմուտք տարածված Փոքր Հայքում, Թեև Թիգլաթ-Պալասարը մասամբ ոչնչացրել, մասամբ էլ փտարել է մուշկերի այն ջոկատները, որոնք երևացել էին Վերին Տիգրիսի հովտում,

¹ Հարցի նորագույն շարադրանքը տես I. A. Меликшвили, Памир—Урарту, Тбилиси, 1954, էջ 313 (մուշկերը՝ փոյուզիացիներ), էջ 409 հետ. (մուշկերը՝ վրացական ղեղեր), էջ 420 (մուշկ-մեսսերի թափանցումը Վրաստան): Տես նաև Ի. Փ. Леманн—Хавунт, Вступительная лекция по истории и культуре халдов, Труды Тбилисск. Гос. Университета, VI, 1933, էջ 261 և E. Cavignac, Mushki et Phrygiens, «Journal Asiatique», CCXLI, 1953, էջ 130:

² Մոսսերը հարակից են եղել տիրաբեռներին, իսկ Մուշկու երկիրը՝ Թարալ երկրին: Երանց Թարալը ոչ մի առնչություն չունի տիրաբեռների հետ. բացի համահնչյունությունից, քանի որ գտնվում էր հարավային Տավրոսում՝ Մարաշից արևմուտք:

³ E. A. W. Budge and L. W. King, Annals of the Kings of Assyria, I. London, 1902 (AKA, I), էջ 33 հետ:

հիմք չկա մտածելու, սակայն, որ մուշկերի ցեղերը չեն պահպանվել Փոքր Հայքում և Արածանիի հովտում 12-րդ դարից հետո.

Նույն այդ շրջանում (Միջագետքից հյուսիս) մուշկերը հիշատակվում են Թուրքաթի-Նինուրտա II-ի (879—884 թթ. մ. թ. ա.) տարեգրության մեջ, այն էլ որպես նստակյաց հողագործ բնակչություն¹, ինչպես նաև Աշուր-նասիրապալի (883—859) տարեգրության մեջ²։ Ակներև է, որ այս «մուշկերը» նույնը չեն, ինչ որ 8-րդ դ. տեքստերի Մուշկու երկիրը։ Ավելի ուշ շրջանի տեքստերը, որոնց մեջ «Մուշկուն» և «մուշկերը» հատկապես Փոյուգիայի և փոյուգիացիների անվանում են հանդիսանում, չեն հիշատակում մուշկերին Տավրոսից արևելք։ Հունական աղբյուրներին նույնպես հայտնի չեն փոյուգիացիները Տավրոսից այս կողմ³։

Հետևաբար, 2-րդ և 1-ին հազարամյակի սկզբի մուշկերը և Մուշկու (Փոյուգիա) պետություն ծագված ժամանակաշրջանի մուշկերը նույնը չեն։ Եվ որովհետև վրացական ցեղերը ոչ առաջ, ոչ էլ ուշ հայտնի չեն Արածանիի շրջանում, բնական է ենթադրել, որ Թիգլաթ-Պալասարի մուշկերը դա թրակա-փոյուգիական այն ցեղերն են, որոնք չեն մտել Փոյուգիայի և փոյուգիական ժողովրդի կազմի մեջ։ Սրանք էլ հենց կարող էին լինել հնդեվրոպական հայոց (կամ նախահայկական) լեզվի հնագույն կրողները. չարժե նրանց հայերի հնագույն նախնիներ անվանել, քանի որ հայ ժողովրդի նախնիների թվի մեջ մտնում է, անկասկած ավելի մեծ չափով, Հայկական ռարձրավանդակի բնակչության ամբողջ զանգվածը, որը սկզբնապես խոսելիս է եղել խուրրիերեն և ուրարտերեն և միայն հետագայում, հայոց լեզվի հաղթանակի հետևանքով դարձել է հայալեզու⁴։

Վաղուց արդեն բոլորի կողմից ընդունված է, որ հայկական հնագույն մարզը եղել է Փոքր Հայքը։ Սակայն առաջին հազարամյակի սկզբում Փոքր Հայքը տալիս է մեզ արձանագրություններ ոչ թե հայերեն, այլ «հերոգլիֆիկ-խեթերեն» լեզվով, բնագործում նրանց տարածման շրջանը բավական ճշգրիտ համընկնում է Փոքր Հայքի սահմանների հետ⁵, միայն հարավում և հարավ-արևմուտքում անցնելով փոյուգիական Տիանիտիաի, Կիլիկիայի և Սիրիայի տերիտորիան։ Սակայն այս վերջին երկու մարզերում «հերոգլիֆիկ-խեթական» արձանագրությունների հետ մեկտեղ կան արձանագրություններ նաև փյունիկյան և արամեական լեզուներով (այդ թվում և երկլեզվյան), որոնք ըստ երևույթին տարածված էին այստեղ «հերոգլիֆիկ-խեթերենի» հետ միասին, ճիշտ այնպես, ինչպես Փոքր Հայքում նրա հետ

¹ V. Scheil, Annales de Tukulti Ninip II, Bibliotheque de l'Ecole des Hautes Etudes. Sciences philologiques et historiques, CLXXVIII, Paris, 1903.

² AKA, I. Տարեգրություն, I, 74:

³ Սակայն փոյուգիական տիպի օնոմաստիկան այստեղ հայտնի է։ Այսպես՝ Թիգա-րիմուի (Թոդարմա) թագավորը 7-րդ դ. սկզբին մ. թ. ա. կրում էր Գորգիոս (Gurdi) անունը։ «Միգաս» անունը հիշատակվում է քարե թասի վրա «հերոգլիֆիկ-խեթերեն» արձանագրության մեջ, տես H. Bossert, Untersuchungen hie oglyphisch-hethitischen Wörter, Mitteilungen des Instituts für Orientalforschung, II, 2, էջ 256 հետ. «հերոգլիֆիկ-խեթական» արձանագրությունների մեջ հիշատակվող «մուշկերը» հնարավոր է, մասամբ այս տերիտորիային են վերաբերում։

⁴ Բանավոր հաղորդման համաձայն նույն կարծիքի է Ս. Տ. Երեմյանը։

⁵ Տես Ի. Մ. Դունասկայայի (О характере и связях древних языков Малой Азии, Вопросы языкознания, 1954, № 6, էջ 63) հոդվածում դետեղված քարտեզը։

միաժամանակ կարող էր գոյություն ունենալ հայերենը (կամ նախահայերենը)։

Մինչև 8-րդ դ. վերջը կամ նույնիսկ 7-րդ դ. սկիզբը մ. թ. ա. շարունակվում են վերադարձվածները Փոքր Հայքի տերիտորիայում Եփեսոսի ֆիլիսթերենի¹ առկայության մասին²։ Բայց արդեն 6—5-րդ դդ. սահմանում այդ տերիտորիան, համաձայն հունական և հին-պարսկական տվյալների³, բնակեցված է եղել արմեններով։ Մինչդեռ գծվար է ենթադրել, որ էթնոսի փոփոխումը տեղի է ունեցել այստեղ 7-րդ դ. ընթացքում՝ Ասորեստանի տիրապետության ժամանակաշրջանում, որը չէր նպաստում ինքնուրույն ժողովրդական մեծ տեղաշարժերին և մինչև 630-ական թվականները հիանալի կերպով լուսարանված է աղբյուրներով։ Իսկ եթե ենթադրենք, որ Փոքր Հայքի բնակեցումը արմենների կողմից տեղի է ունեցել աղբյուրներով ազոտ լուսարանված 630—522 թվականներում, ապա հարց է ծագում, որտեղից կարող էին նրանք այն ժամանակ երևան գալ։

Ոչ միայն 7—6-րդ, այլև 9—8-րդ դդ. փոյուզիական ժողովուրդն արդեն ձևավորվել էր որպես այնպիսին, իսկ հայերենի և փոյուզիերենի մոտիկությունը այնքան մեծ չէ, որ կարելի լիներ հայերենը դուրս բերել փոյուզիերենից. հայոց լեզուն ինքնուրույն, թեև ազգակից ճյուղավորում է թրակա-փոյուզիական հիմք-լեզվի և ելնում է նրանից ոչ թե փոյուզիերենի միջնորդությամբ, այլ անմիջապես։ Որքանով մենք փոյուզիերենում արդեն 9—8-րդ դդ. տեսնում ենք նրա զարգացման այնքան բնորոշ առանձնահատկությունները, որոնք հատուկ չեն հայերենին և երբեք չեն եղել⁴ ինչպես, օրինակ՝ հ.-ե. *g^w > h անցումը և այլն, այնքանով հայերենը չի կարելի սերել փոյուզիերենից։ Հայերը չէին կարող Փոյուզիայից եկած լինել 7-րդ—6-րդ դարերում։

Արևելյան Փոքր Ասիայում թրակա-փոյուզիական լեզվական տարրերի մյուս հնարավոր աղբյուրը կարող էին լինել կիմերները, որոնք հանդես են եկել այստեղ 8-րդ դ. երկրորդ կեսին։ Ինչպես հայտնի է, մի շարք գիտնականներ Սև ծովի հյուսիսային եզերքի նախասկյութական պայմանակա-նորեն «կիմերական» կոչվող ցեղերը համարում են թրակիական։ Մակայն մի այլ տեղ մենք փորձել ենք ցույց տալ, որ արևելյան աղբյուրների gimirrai եղել են ամենայն հավանականությամբ սկյութական, այն է՝ իրանակալի ցեղերից մեկը. ցավոք սրտի մեզ հասել է միայն երկու կիմերական հատուկ անուն, որոնցից մեկը գրեթե անպայման իրանական է.

¹ Եփեսոսի ֆիլիսթերենի լեզվով արձանագրությունները զաղարում են տեղական մանր թագավորությունների ինքնուրույնությունը կորզնելու հետ միասին 8-րդ դ. (մ. թ. ա.) վերջում, սակայն ուրարտական արձանագրությունները գեոևս 7-րդ դարում Փոքր Հայքն անվանում են «Խաթեն», տես Գ. Ա. Меликишвили, Клинообразная надпись царя Русы II из Адыльджеваза, Сообщения АН ГрузССР, XI, 1950, № 10 և И. М. Ляконов, Заметки по урартской эпитафийке, II, «Эпиграфика Востока», VI, 1952, էջ 112։

² Հերոդոտոսի մոտ (III, 93) սատրապությունների ցուցակը, որը ելնում է Հեկատոյասից և վերաբերում 500 թ. մ. թ. ա. (13-րդ սատրապություն)։ Նույնպես և Դարեոս I-ի արձանագրություններում Հերոդոտոսի 13-րդ և 18-րդ սատրապությունները կոչվում են Arminai։

³ Ինչպես վերևում նշվեց, հայերենում հ.-ե. *g^w > h, որը չէր կարող ծագել b-ից։

դուցե նաև Երկրորդը¹։ Նամանավանդ, որ կիմմերները Փոքր Ասիայում անտարակույս խիստ սակավաթիվ են եղել և պետք է անհետ կորչեին տեղական բնակչության միջավայրում։ Դժվար թե նրանց լեզուն կարողանար /սաչավորման հետևանքով հաղթանակող հանդիսանալ²։

Մնում է ենթադրել, որ հայալեզու բնակչությունը բնակվելիս է եղել Փոքր Հայքում 8-րդ դ. շատ ավելի առաջ։ Սեփական գրավոր և գրական տրագիցիա չունենալով, նրանք օգտվում էին այն բնակչության լեզվով և գրով, որը նրանք գտել են այստեղ դեռ 12-րդ դ. մ. թ. ա., այն է՝ Վիերոգլիֆիկ-խեթերի³։ Սրանով է ըստ երևույթին բացատրվում Վիերոգլիֆիկ-խեթերեն արձանագրությունների տարածման տերիտորիայի համընկնումը հայերի տարածման ենթադրական հնագույն տերիտորիայի հետ։ Սրանով է բացատրվում նաև զբաղի խեթական լեզվական շերտի առկայությունը հայերենում։ Առաջին հաղարամյակի սկզբի հայերը հանդիսանում էին տեղական խեթական (գերազանցապես՝ Վիերոգլիֆիկ-խեթական) բնակչության և թրակա-փոյուղիական ժողովրդի⁴ (բառիս այն առումով, որը հատուկ էր Երկրորդ հազարամյակին մ. թ. ա.) ցեղերի խառնուրդ։

Համենայն դեպս, կասկածից դուրս է, որ արդեն 8—7-րդ դդ. Փոքր Հայքի և Մեծ Հայքի արևմտյան մասի հայախոս բնակչությունը, պետք է չգոր և միատարր զանգված հանդիսանար, որով միայն և կարելի է բացատրել այն փաստը, որ Հայկական բարձրավանդակի մանր ցեղերի և ժողովուրդների միաձուլման ընթացքում արդեն 5-րդ դդ. մ. թ. ա. հաղթանակեց հայերենը, դուրս մղելով հին (այդ թվում և գրավոր) տրագիցիա ունեցող խուրրիերենը և ուրարտերենը։ Սկսած 5—4-րդ դդ. մ. թ. ա. և ավելի ուշ հայերը դա նախ և առաջ հայոց լեզուն յուրացրած (խեթական ներարկումներով հանդերձ) Հայկական բարձրավանդակի նախկին խուրրիերենը և ուրարտացիներն են։ Սակայն պետք է նշել, որ դեռ շուրջ 500 թ. մ. թ. ա. Հայկական բարձրավանդակի արևելյան և հյուսիս-արևելյան շրջանները գրադեցված են եղել ուրարտացիներով (ալարոդներով) իսկ Եփրատի վերին հոսանքում, Հայկական Տավրոսի լեռներում և մերձուրմյան շրջաններում ապրում էին խուրրիները (մատիենները)⁵։

Բնչպես մեզ թվում է, շարադրած տեսությունը լավագույն ձևով է բացատրում հին հայերենի կազմի իր ուրարտական և խեթական լեզուկային շերտերով՝ հիմնական թրակա-փոյուղիական կորիզի առկայությամբ, ընդ որում պետք է հաշվի առնել պարթևական և այլ, ավելի ուշ շրջանի (գլխավորապես սկսած 2—3-րդ դդ. մ. թ.) իրանական տարրերը։

6. ԱՆՎԱՆՈՒՄԸ

Հայերը հնում հայտնի են եղել երեք գլխավոր անուններով՝ ա) somx-վրացերենում, բ) arminiya- հին-պարսկերենում, armenioi հունարենում, գ) hay- բուն հայերենում։ Այս անունների ծագումը քիչ նշանակություն չունի հայ ժողովրդի էթնոգենեզի պրոբլեմի համար։

¹ Ասուերական հաղորդումով Sandaksatru (հմտ. իրան. -xšāθra) և Teuspa (իրան. Gavāspa??)։

² Նույնը պետք է ասել սկյութների (ըստ ակադ. Վ. Վ. Ստրուվեի առաջարկության նաև սակերի)՝ ոչ բաղձաթիվ բուշվորների վերաբերյալ, որոնք կարճատև փոթորկի նման տնցել էին Հայաստանի վրայով։

³ Herod. I, I, 94; V, 49։

Առաջին անունը (somx-) Բ. Բ. Պիոտրովսկին¹ առաջարկում է, հետևելով Գ. Խալաթյանցին, համարել ծագած վրացական տերիտորիաներին սահմանակից Հայկական բարձրավանդակի այն մասերի անունից, որը նե-սիական-խեթերեն կոչվել է Zulma, ակկադերեն՝ Suḫma կամ Suḫmu, Գ. Ա. Ղափանցյանը հակված է այս անունը սերել Moσχοί էթնոնիմից: Երկու մեկնարանություններն էլ ելնում են դրավիդոսթյան (երկրորդ դեպքում ավելի բարդ) առկայությունից, և այս կամ այն ստուգաբանության հավաստի լինելը պետք է որոշվի հայագետ և կովկասագետ բանասեր-մասնագետների կողմից՝ հաշվի առնելով նման հնչյունական երևույթի հավանականությունը տվյալ պայմաններում և հայերենի ու վրացերենի զարգացման տվյալ շրջանում²:

Երկրորդ անունը, armenioi, սովետական դիտություն մեջ սովորաբար սերում են³ Արմե (կամ Ուրմե) երկրի անունից (ակկադերեն՝ Շուրրիա), որը 9—8-րդ դդ. գտնվում էր Սասնա լեռներում՝ Վանա լճի հարավ-արևմուտքում. ենթադրվում է⁴, որ հենց այստեղ է գտնվելիս եղել Հայկական պետականության կազմավորման կենտրոնը 7-րդ դ. վերջի— 6-րդ դ. սկզբի փոթորկալի ժամանակաշրջանում, և այդ իսկ պատճառով էլ հայերը հայտնի են դարձել այդ անվան տակ Արմեին սահմանակից հարավային և այլ հարևանների մոտ⁵:

Այս մեկնարանությունը մեզ ընդունելի է թվում ֆիլոլոգիական վերլուծման հիման վրա և ներդաշնակում է մեր տեսակետի հետ, որի համաձայն հայախոս էթնոսի կենտրոնը, Փոքր Հայքի հետ մեկտեղ, եղել է Սասունին սահմանակից Արածանիի հովտի ստորին մասը: Երրորդ անունը, hay-, համաձայն այն տեսության, որը Կ. Ռոտից և հատկապես Պ. Կրեչմերից հետո մանրամասնորեն զարգացրել է Գ. Ա. Ղափանցյանը, սերվում է Hajasa երկրի անունից, այն երկրի, որը հայտնի է լեռնական աղբյուրներից և երկրորդ հազարամյակում մ. թ. ա. գտնվում էր Բարձր Հայքում այժմյան էրզրումից արևմուտք: Ընդամին Hajasa բառի մեջ որպես հիմք է ընդունվում haja- տարրը (ըստ Կրեչմերի hayo-, սակայն «o» գծվար թև կարող էր լսեթերենում փոխանցվել «a»-ի), իսկ -sa-ն գիտվում է որպես փոքրասիրական հայտնի տեղանունային -sa, -ssa ածանց: Հնչյունաբանական տեսակետից նման ստուգաբանության դեմ սկզբունքային առարկություն չկա, սակայն պետք է նշել՝ ա) որ տեղանունային -sa, -ssa ածան-

¹ Б. Б. Пиотровский, О происхождении армянского народа, Ереван, 1946, էջ 24 հետ.

² Մեզ անհայտական է թվում հեռավոր և զուտ արտաքին համահնչյունության վրա հիմնված «մուշկ» տերմինի զուգադրությունը Կապադոկիայի Մաժաք քաղաքանվան հետ, որովհետև հայ. չ չի կարող համապատասխանել s, s-ին:

³ Б. Б. Пиотровский, Հիշ. աշխ., էջ 9—10 հետ., Դ. А. Капанцян, Хайаса—колыбель армян, Ереван, 1947, էջ 171 հետ., Ս. М. Дьяконов, Заметки по урартской эпиграфике, 1, «Эпиграфика Востока», IV, 1951, էջ 108:

⁴ Б. Б. Пиотровский, Հիշ. աշխ. էջ 18—24:

⁵ Armina իրանական -a վերջավորությամբ ուրարտական *arm-ini «արմացի» ձևի միջոցով: Ի հակադրություն հաճախակի պնդումներին, -ina տեղանվանական ածանցը ուղիղ հորիզով հաստատ կերպով չի վկայարանված: Ուրարտական արձանագրություններում -ina -ն -inil-ի հոգնակիի տեղական հոլով է. tiatlina երկրի անունը, ըստ երևույթի պարունակում է հոգնակիի խուրրիական -na ածանցը:

յը բացակայում է հայերենում¹. ր) որ խայսասայի լեզուն, դատելով ըստ Գ. Ղափանցյանի տվյալների, հնդեվրոպական չէր, իսկ նրա աստվածների անունները ընդհանուր ոչինչ չունեն հայկական գիցանունների հետ². դ) որ 13-րդ դարից մինչև hay- տերմինի երևան գալը մեր թվագրության սկզբում, ոչ մի վկայություն չկա խայսացիների գեպի հարավ՝ Փոքր, իսկ հետագայում նաև Մեծ Հայքի տերիտորիան տեղաշարժության մասին³.

Կարելի է հարց տալ. քանի որ հնդեվրոպական հայոց լեզվի կրողները ապրում էին Փոքր Հայքում և Մեծ Հայքի արևմտյան մասում և, հնարավոր է, Ուրարտուի անկումից հետո տեղաշարժ են կատարել գեպի արևելք, ապա ինչպես պետք է նրանց անվանելին հայկական Բարձրավանդակի կենտրոնական շրջանների բնակիչները, որոնք այն ժամանակ անկասկած խոսելիս են եղել գլխավորապես ուրարտերեն։ Այդ հարցին կարելի է միանգամայն որոշակի պատասխան տալ. նրանց անկասկած պետք է անվանելին հենց այնպես, ինչպես մ. թ. ա. առաջին հազարամյակի առաջին կեսում ամբողջ Առաջավոր Ասիայում, թե Ասորեստանում և թե Ուրարտուում, անվանում էին Փոքր Ասիայի արևելյան մասի բնակիչներին, ինչպես նաև Ասորիքի, իսկ Ուրարտուում հատկապես Փոքր Հայքի բնակիչներին, այն է՝ խեթեր⁴.

Ուրարտերեն «խեթը» կոչվում էր *ḫatini*, հոգնակիում՝ *ḫatinili*⁵. Երկրի անունը՝ *Hate* կարող էր գործածվել որպես ժողովրդի անվան, *ḫatinili*-ի,

¹ Г. А. Капанцян, Суффиксы и суффиксированные слова в топонимике древней Малой Азии, Ереван, 1948, էջ 13.

² Տես վերևում, էջ 4։ Իսյց դրա փոխարեն հայերն ունեցել են խեթական և փոյուզիական աստվածներ, տես Г. А. Капанцян, Хеттские боги у армян, Ереван, 1940, էջ 24—51.

³ Գ. Ա. Ղափանցյանն իր «Խայսասան՝ հայերի բնօրրան» գրքում խայսացիների գեպի հարավ մասսայական տեղաշարժությունների մասին ոչ մի պատճառական վկայություն չի բերում, իսկ այդ տեղաշարժության՝ նրա կողմից բերվող ենթադրական տարեթվերը և էտապները ոչնչով չեն հիմնավորված, բացի խայսաս երկրի անվանը որոշ չափով համահնչուն մի քանի դյուդերի անունների վկայակոչումից։ Սակայն համարյա թե երբեք գյուղերի անունները չեն արվում ըստ ցեղերի և ժողովուրդների անունների. այդպես պատահում է թերևս միայն որևէ էթնիկական միջավայրում դոյացած օտար էթնիկական կղղյակների դեպքում կամ երկու էթնոսների միջև ընկած սահմանային գոտում։ «Русское» անունով դյուդը հնարավոր է, օրինակ՝ Լեհաստանում կամ Ղաղախստանում, իսյց ոչ համատարած ուսական բնակչություն ունեցող տերիտորիայում, որտեղ բոլոր գյուղերը ուսական են։ Այլ բան է, երբ ժողովուրդը կոչվում է քաղաքի անունով (ինչպես ասորեստանցիները Ասսուրի անունով, բաբելացիները՝ Բաբելոնի)։

⁴ Ասորեստանում «խաթթի» տերմինի գործածության մասին տես И. М. Дьяконов. Ассирио-вавилонские источники по истории Урарту, «Вестник древней истории», 1951, № № 2—4, № 23, ծանոթ. 63, № 46, ծանոթ. 7 (խաթթին «Ասորիքի» իմաստով երբեք արտահայտվում է որպես «Ամուրրու երկրի խաթթի», Սարգոն II, Տարեգրություն, տող 41), Ուրարտուում տես Г. А. Меликишвили, Наир-Урарту, Тбилиси, 1954, էջ 54 հետ., նույնի Урартские клинописные надписи. ВДИ, 1954, № 1, էջ 238։ «խաթե»-ն սահմանակից է Ծոփրին, УКН, № 39, 11, Ալդիին՝ Արածանի հովտում, № 28 երես 7—8, Մալաթիային, № 127, II, 15—16, Մուշկուին (Փոյուզիային) և խալտուին (խալիբների երկրին) УКН, № 278, 4։

⁵ Թեք հոլովները՝ *ḫatina*, *ḫatinase*, *ḫatinaidi* (տես УКН. № 28, 7, 39, 11, 127, 11, 12—15) *ḫatinili* ձևից են։

սինոնիմ (այսպես՝ Արդիշտի 1-ի տարեգրությունից, YKH, № 127, II, տող 5.— Hate, տող 12— Latinili նույն իմաստով)։

Եթե այդ տերմինը պատկանում է Հայկական բարձրավանդակի կենտրոնական մասի բնակիչների մոտ նաև այդ բնակչության՝ հայոց լեզվին անդնելուց հետո, ապա ոչ մի կարիք չկա hay էթնոնիմի համար այլ ստուգաբանություն որոնելու, քանի որ -ate- դուգակցությունը օրինաչափորեն տալիս է հայերենում -ay- դուգակցություն (հմմտ. *pater > *p.hathir > *hahir > hayr «հայր» *mater > *matahir > *mahir > mayr «մայր»¹։

Իսկապես այդ կարգի փոփոխություններն ինչպես -ate/i- > -ay- անցումը, պետք է տեղի ունենային ավելի ուշ, քան VI—V դ.դ. VI—V դդ. մ. թ. ա. հայերենը դեռ այնքան մոտ է եղել փոյուզիերենին, որ դա նկատելի էր կողմնակի դիտողներին, իսկ փոյուզիերենը, ինչպես արդեն նշվեց, լավ էր պահպանել հին հնդեվրոպական ձևերը, այդ թվում նաև «ստուգողական» *pater և *mater բառերը (p^hathar և mat^har ձևերով)²։

Այն միտքը, որ hay- էթնոնիմը ոչ այլ ինչ է, եթե ոչ «խեթ» բառը իր ավելի ուշ, հայոց լեզվի հնչյունաբանական ներքին զարգացումից առաջացած ձևով, նոր բան չէ³, իայց նա արտահայտվել է կես դար առաջ, Պ. Յենսենի տեսությամբ կապակցությամբ, որի համաձայն այն ժամանակ դեռ չվերծանված «հիերոգլիֆիկ-խեթերենը» նույնացվել է նախահայերենի հետ, և մի կողմ դրվել, երբ պարզվել է այս տեսության սխալ լինելը։ Սակայն այժմ մենք դիտենք, որ «խեթեր» անվանումը սահմանափակված չի եղել որևէ մեկ ժողովրդով կամ լեզվով, և ըստ էության ոչ մի տվյալ չկա համարելու, որ «հիերոգլիֆիկ-խեթերենը» գերազանցապես (կամ առհասարակ)⁴ անվանվել է «խեթերեն»։ այդ, գիտություն մեջ ընդունված անունը պայմանական է։ «խեթեր» բառը ընդհանուր անվանում է եղել արևելյան Փոքր Ասիայի և Ասորիքի բնակչության համար և ուրարտացիների կողմից հատկապես գործ էածվել Փոքր Հայքի բնակչության վերաբերմամբ։ Առաջին հազարամյակի (մ. թ. ա.) կեսին Փոքր, մայր և Մեծ Հայքի հայախոս բնակչության կապը խեթերի «Խաթե» երկրի հետ եղել է անմիջական, ի տարբերություն «Խայասա» տերմինին, որի համար միջնորդական օղակներ չկան⁵։

¹ hay- բառի սկզբի հ-ն քիչ քան է տալիս նրա սկզբնական ձևը որոշելու համար. նա կարող է անդրադարձնել թե սկզբի ք-ն, թե սկզբի ք-ն, թե սկզբի ք-ն, և դուցե նույնիսկ սկզբի կոկորդային Կ-ն (խեթ. hanṭas՝ «տատ», հայ. han). համաձայն Գ. Ղափանցյանի. Վասդուրականի բարբառներում հ-ի փոխարեն հանդիպում ենք ի։

² «խեթ» բառը VI—V դդ. նախահայերենում պետք է հնչեր *hāt ios, *hathyos և վերադրվեր -օ ով հիմքերին, որոնց թվին է պատկանում hay- բառը։

³ Ինչպես ինձ հայտնեց Ս. Տ. Երեմյանը, դրա մասին դեռ է Հակոբյան Տաշյանը. Ուսումնական հայերեն լեզուի (հայկաբանություն)։ Անդր ժամանակակից, Վիեննա, 1920, էջ 79—81։

⁴ Համարաբար «հիերոգլիֆիկ-խեթեր» մտնում էին «լուվիացիներ» ընդհանուր հասկացությունից մեջ, թեև հիերոգլիֆիկ արձանագրություններում վկայաբանված լեզուն զգալի չափով տարբերվում է նեսիական խեթական (սեպարիր) տեքստերի լուվիական հատվածներից։

⁵ Այդպիսով հայերը կոչվում էին «խեթեր» նույն պատճառով, ինչ որ արևմտյան վրացիները կոչվել են «մոսխեր», որովհետև նրանք առաջ ասլեղիս են եղել փոյուզիական, իսկ սրանք խեթական տերիտորիայի վրա։

7. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերևում շարադրված ից ելնելով, մենք կարծում ենք, որ հայերենն իր հինական րաօային ֆոնդը մտնող կորիզով թրակա-փոյուգիական ճյուղին պատկանող հնգավրոպական լեզու է, սակայն նա չի առաջացել ոչ փոյուգիերենից և ոչ էլ թրակիերենից, այլ հերկայացնում է իրենից մի ինքնուրույն ճյուղավորում: Նախահայերենի կրողները կազմում էին պատմականորեն հաստատված Բալկաններից Փոքր Ասիա թրակա-փոյուգիական շարժման առաջավոր ալիքը. այդ շարժման վերջին ալիքը հանդիսացել է բյուրխներ զաղթը 8-րդ դ. (?) մ. թ. ա.: Թրակա-փոյուգիական ցեղերը, այդ թվում նաև նախահայերենի կրողները երկրորդ հազարամյակում հայտնի են եղել Վաստիերի անվան տակ: Այդ տերմինը առաջին հազարամյակի սկզբում հատկացվել է բուն փոյուգիացիներին, իսկ հետագայում (Μεσσοί, mesx- ձևով) գործածվելիս է եղել արևմտյան վրացախոս ցեղերի նկատմամբ:

Նախահայերենի կրողները 12-րդ դ. մ. թ. ա. հաստատվել են Փոքր Հայքում, այն տերիտորիայում, որտեղ բնակվում էին հին-անատոլյան Վերոգլիֆիկ խեթերը, որոնց լեզուն, գործածվելով որպես գլխավոր լեզու, հայերենի վրա մեծ ազդեցություն է գործել որպես սուրստրատ լեզու (հնարավոր է հեսիական-խեթերենի և այլ լեզուների հետ միասին, որոնք իրենց հերթին որպես սուրստրատ ունեցել են նախախեթերենը): Հարևան ժողովուրդների մոտ Փոքր Հայքի ամբողջ բնակչությունը կրել է խեթեր անվանումը:

Նախահայկական լեզուն կրողների առաջավոր խմբերը 12-րդ դ. մ. թ. ա. թափանցել են նաև խուրրիական տերիտորիան Հայկական բարձրավանդակի արևմտյան մասում, հատկապես Սրածանիի հովտի ստորին մասը, իսկ հետագայում հավանական է նաև Սասուն-Արմեյի (Շուրրիա) տերիտորիան, որի անունով և, ինչպես ենթադրվում է, հետագայում շրջապատող ժողովուրդների կողմից անվանվել են Վասունները:

Ուրարտուի անկումից հետո մ. թ. ա. 6-րդ դ. սկզբում խեթեր—արմենների լեզուն ավելի մեծ չափով է տարածվել Մեծ Հայքի նախ արևմտյան, ապա արևելյան և հյուսիս-արևելյան մասի բնակչության մեջ: Վեթեր (Hate>hay-) անունը դարձել է այդ ժամանակաշրջանում Հայկական բարձրավանդակի հայախոս բնակչության համաժողովրդական ինքնակոչումը, մի բնակչություն, որի մեջ հետզհետե մտան խուրրիներն՝ ու որարտացիները, որոնց լեզուն կազմեց հայերենի երկրորդ հզոր սուրստրատը: Հատկապես խուրրիները և ուրարտացիները, հայոց լեզուն յուրացնելով, կազմեցին ֆիզիկական (մարմնական) և կուլտուրական կողմից հայ ժողովրդի հիմնական կորիզը Վերոգլիֆիկ-խեթերի հետ միասին. այս վերջինների թվում թրակա-փոյուգիական ցեղերի՝ նախահայկական հնգավրոպական լեզու կրողների հետևորդները, ամենայն հավանականությամբ, կազմել էին թվական տեսակետից պակաս նշանակալի շերտ, և բուրբուրի աննշան հայկական ժողովրդի (ԱՅՐՈՃԽՈՇԵՅ) վերջնական կազմի մեջ: Ինչ վերաբերում է խոյասա երկրին և այդ տերմինի հարաբերու-

¹ խուրրիների հյուսիսային խմբերը, մյուս հին-արևելյան ցեղերի հետ մեկտեղ, ըստ երևույթին, դեռ են խաղացել նաև վրացիների էթնոգենեզում:

թյունը նաև ըմբռնելի հետ, ապա թեև ննչյունաբանական տեսակետից նաև չափազանց արագի առաքելությունը չի հարուցում, այս հարաբերությամբ մեզ թվում է լրիվ կերպով չափացուցված, աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ խայտառի լեզուն ննդեվրոպական չէր, ինչպես և այն, որ երեքորդ հազարամյակի (մ. թ. ա.) խայտառի¹ և ուր ժամանակահատվածի հետ հայերի միջև պարզորոշ միջնորդական օղակներ դժվար է հայտնաբերել:

Պետք է համակապես ընդգծել այն, որ մեր տեսությունը փորձում է քաջատեսել միայն հայոց լեզվի ննդեվրոպական (իր հիմքում) բնույթը, իսկ թրակա-փոյուզիական ճյուղի ննդեվրոպական ցեղերը՝ հայ ժողովրդի (որի մեջ նրանք մտել են միայն որպես համեմատաբար աննշան փոքրամասնություն) հիմնական նախնիները չի համարում:

Մեր եզրմիջ առաջադրված տեսությունը համաձայն, հայ ժողովուրդը կազմավորվել է ուրարտացիներից և խուրրիների մի մասից, որոնք ձուլվել են խեթական պետության անկումից հետո Փոքր Հայքի տերիտորիան առաջխաղացած թրակա-փոյուզիական ցեղերի առաջավոր խմբերից նախահայերենը յուրացրած ժողովրդի-խեթերի՝ հետ:

¹ Խեթական գրաֆիկայում բացակայում է ն նշյունը արտահայտող նշանը, չնայած է, որ այդ նշյունը ընդհանրապես գոյություն չի ունեցել խեթերենում: Բոլոր խեթական տեքստերին ծանոթ է միայն խայտառ տեքստը, չայասա տեքստին գոյություն չունի: